

ՄԱՍԻՍ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

Ազգային, Գրական, Քաղաքական, Գիտական

35^{րդ} ՏԱՐԻ, Դ. ՇՐՋԱՆ

ԹԻԻ 46

15 ՆՈՅԵՄԲԵՐ 1903

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Յոբելեանք. ՄՈՒՇԵՂ ՎԱՐԴԱՊԵՏ:—ՍԼԵՏԱՐԱՆ (Բերքուած Զոանսուա Քօքի) Թարգմ.
Ռ. Յ. Պերպերեան:—Վառարանիս անկիւնէն ՄԵՆԱՍԷՐ:—Իտալական գրականութիւն «Կրկ-
նեութիւն» ՄԱԹԻՆՏ ՍԵՐԱՍ Թարգմ. ԵՏԼՎԱՅՍ:—Տիղմին մէջ ՆՆՈՎՔ ԱՐՄԵՆ:—Հան-
գանակ (Բանաստեղծութիւն) Վ:—Լիլիէն Մօրիս (Վերջին մաս) ՀԷՆՐԻԿ ՍԷՆԳԻԷՎԻՉ.
Թարգմ. ԶԻՅԹԷ-ՍԱՐԱՅ:—Խմբագրական Նօթեր:

Յաջորդ քիւով Դեղան Թերթօն մը ԲԻԷՆ ԼՕԴԻԷ, զոր յաշկապէս ՄԱՍԻՍԻ համար քարգ-
մանաձ է ԶԻՅԹԷ-ՍԱՐԱՅ.

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄԱՍԻՍ Շաբաթաբերքի տարեկան բաժանորդագիրն է Կ. Պոլսոյ համար Բառսուն դրօ.
Եւ գաւառներուն համար յիսուն դրօ., կանխիկ վճարելի: Արտասահման 12 Զրանք կամ
5 Բուլլի: Թղթաստեղծական ծախքը Խմբագրութեան վրայ է: Վեցամսեայ բաժանորդագրու-
թիւն չընդունուիր: Բաժանորդագրութիւնները կը սկսին ամէն ամսոյ մէկին: ՄԱՍԻՍ
հրատարակելի ամէն շաբաթ առտու: Այն բաժանորդները որոնք պակաս քերք ստացած
են, պիտի է իսկոյն իմացնեն Խմբագրութեան: Ժամանակ անցնելէ վերջ՝ այս տեսակ առա-
կութիւնները նկատողութեան չեն առնուիր:

Զի հրատարակուած ձեռագիրները եւ չեն դարձուիր:

ՄԱՍԻՍԻ մէջ կ'ընդունուին նաեւ ծանուցումներ, դիւրամասշնչելի պայ-
մաններով:

Զեմ-ԲԷ ԿԸ ԾԱԽՈՒԻ ՀԱՏՐ ՔԱՌՍՈՒՆ ՓԱՐԱՅԻ

Հասցէ

درعليه ده غلطه ده (ماسيس) غرضه سى اداره سى

ԽՐԲԱԳՐՈՒԹԻՒՆ ՄԱՍԻՍԻ

Rédaction de la Revue MASSIS

Կ. Պոլիս, Հալաքիս

Galata, Constantinople

LA CONFIANCE



ԼԱ ՔՕՆՖԻԱՆՍ

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀՐԴԵՀԻ ԵՒ ԿԵԱՆՔԻ ԴԷՍ

Ապահովագրական այս ընկերութիւնը, որ հաստատուած է ու կը գործէ Ֆրանս. կառավարութեան ֆոնդօյի ներքեւ, երաշխաւորեալ դրամագլուխ ունի՝ հրդեհի ճիւղին համար 56,000,000 ֆր. եւ կեանքի ճիւղին համար 36,000,000 ֆր.:

ԼԱ ՔՕՆՖԻԱՆՍ մէկն է Եւրոպայի ամէնէն պատուաւոր եւ ամէնէն վստահելի ապահովագրական մեծ ընկերութիւններէն, եւ ուր որ մասնաճիւղ հաստատուած է՝ միշտ գործած է իր բոլոր յաճախորդները, իր կատարեալ ուղղամտութեամբ եւ կանոնաւոր գործառնութիւններով:

Այս վաղեմի ընկերութիւնը մեծ վարկ կը վայելէ ամէն կողմ. եւ իր գործառնութեանց ու վստահելիութեան վրայ գաղափար մը տալու համար թուենք մէկ քանին այն հանրածանօթ հաստատութիւններէն, որոնք ապահովագրուած են ԼԱ ՔՕՆՖԻԱՆՍի:

Ֆրանսայի նահանգներու եւ գաւառներու կարգ մը պաշտօնատուներէն զատ, Բարիգի՝ Օբէրա, Վօտվիլ, Նուվօթէ, Ամպիկիւ, Ֆօլի-Տրամաթիք եւայլն թատրոնները, նաեւ Պօռտոյի, Թուլուզի, Լիօնի, Մարսիլիայի, Նանդի, Նիսի, Ալճէրիոյ, Բուէնի, եւ ուրիշ տեղերու մեծ թատրոնները:

Պօն Մարշէն, Լուվրի վաճառատուները, Բիկմալիոնը, Բրէնթանի, Պէլ-Մառտինիէոի, Օթէլ տը Վիլի եւ Սամարիթէնի մեծ վաճառանոցները:

Թրանսօթիանթիք, Հալր-Մարսիլիա նաւարկութեան, Մովային Փոխադրութեանց, Ֆրանսական Թրամուէյներու, խնայողական երկաթուղիի ընկերութիւններ:

Մասնաւորապէս ուշադրութեան առնուելիք պարագայ մըն է որ ԼԱ ՔՕՆՖԻԱՆՍ ընկերութիւնը, իր Կազմական Կանոնագրին համաձայն, պարտաւոր է ամէն վեց ամիսը անգամ մը իր ելմտական կացութիւնը ենթարկել Ֆրանսայի Առեւտրական Նախարարութեան քննութեանը. նոյնպէս Սէնի քաղաքապետութեան, Բարիդի Առեւտրական Սենեակին եւայլն:

Ընկերութեան դրամատունն է Բրէտի Լիօնէն:

Սոյն ընկերութեան Պոլսոյ կողմի գործակալութիւնը ստանձնած է մեր հրապարակին վրայ իր պատուաւորութեամբ ծանօթ

ԳԱՌՆԻԿ ԱՃԱՌԵԱՆ

Որուն պէտք է դիմել՝ թէ՛ հրդեհի եւ թէ՛ կեանքի ճիւղին վերաբերեալ ապահովագրութեանց կամ տեղեկութեանց համար: Դ. Աճառեան կը վարէ նոյնպէս Compagnie d'Assurances générales Maritimes ծովային ապահովագր. ընկերութեան Պոլսոյ կողմի գործակալութիւնը:

Հասցէ.—Պօլիս, Մահալա փաշա, Պէօյիւք Եւլտըզ խան, թիւ 14, Լա Գօնֆիանս ապահովագր. ընկ. Գրասենեակը:

Գառնիկ Աճառեան կը վարէ նաեւ, իր անձնական սեփականութիւնը եղող անքիֆաի վաճառատուն մը, Պօլիս, Շուկայ, Մուհաֆազաճըլար, թիւ 46, ուր գաւառներէն առուծախի յանձնարարութիւններ կ'ընդունուին:

Ի Ի Ն Ի Օ Ն

ՀՐԴԵՀԻ ԵՒ ԿԵՆԱՅ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿ

ՀԱՍՏԱՏԵԱԼ Ի ԲԱՐԻՁ 1828-1829

Հ Ր Դ Ե Հ Ի Ժ Ի Դ Ղ

Մինչև 1902ի վերջը հատուցեալ վնասք	274,000,000	Փր.
1902ին գանձուած ապահովագրին	24,000,000	»
Դրամագլուխ երաշխաւորեալ	119,000,000	»
Ապահովագրեալ դրամագլուխ	21,500,000,000	»

Կ Ե Ն Ա Յ Ժ Ի Դ Ղ

Մինչև 1902ի վերջը հատուցեալ վնասք	129,000,000	Փր.
Ընթացիկ ապահովագրութիւնք	272,000,000	»
Դրամագլուխ եւ պահեստք	158,000,000	»
1092ին գանձուած ապահովագրին	12,000,000	»

որ ընթացիկ ապահովագրութեանց գումարին հետ կը համեմատի 60% — ինչ որ «Իւնիոն»ի ապահովագրելոց կ'ընծայեն հսկայ երաշխաւորութիւն մը ՈՐՈՒՆ ՆՄԱՆԸ ԿԱՐԵԼԻ ՁԵ ՔՏՆԵԼ ԱՐԵՒԵԼՔԻ ՄԷՁ ԳՈՐԾՈՂ ՈՒՐԻՇ ՈՐ ԵՒ Է ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՔՈՎ:

Արեւելքի համար մասնաւոր սակացոյց՝ գեղջեալ գինեւոյ: Նպաստաւոր պայմաններ անհամեմատ կերպով աւելի գերազանց քան ուրիշ ո՛ր եւ է ընկերութեան պայմանները: Շահարածիներու տարուէ տարի անմիջական վճարում, որով Իւնիոնի ապահովագրուողք ՁԵՐԾ են այն վնասներէն եւ յուսալաւութիւններէն, որոնց կ'ենթարկուին միշտ այն անձինք, որ շահաբաժիններու բարդման (accumulation des bénéfices) ՅՈՒԹԻ եւ ՎՆԱՍԱԿԱՐ դրութեամբ գործող ընկերութեանց կ'ապահովագրուին:

Ընկերութեան դրամասունքն է ՕՍՄԱՆԵԱՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՊԱՆՔԱՆ

Թուրքիոյ եւ Արեւելի ՏԵՐԵՐՈՒՔԻՆ

Պոլիս, Սուլթան Համամ, Բասաթ Բաքընք, Օղլու

Մասնաճիւղ՝ Ղալաթիա, Ինայէթ Խան: Գործակալութիւնք Թուրքիոյ գլխաւոր քաղաքաց մէջ



ՅՈՎԱԷՓ ՊԱԼՊԱԼԵԱՆ

(ՄԵՂՐՈՒՆԻ)

ԱՏԱՄԱՆԱՌՅՈՒ

Մուգաֆէրիէ Հիւանդանոցին եւ

Պարսկական Իւսպանատան

Բերա, Մեծ Փողոց, Թագսիմ, քիւ 61

Ջրանեան աբաւքան

Պալապլեան ամէն օր ակոյալի ամէն տեսակ հիւանդութիւններով տառապողները կ'ընդունի. իսկ Ուրբաթ, Կիրակի եւ Երեքշաբթի մինչեւ ժամը 5, Գիշերուան ո եւ է ժամուն կարելի է դիմել: Պալապլեան կ'երաշխաւորէ իր լեցուցած ու չինած ակոյաները: Տորեկները ակոյալ քաշել տալու համար որոշ վարձք մը չկայ. քաշել տուողին կամքէն կ'ախտալ է:

Աղբասներուն ձի

Ա.ՊԱՌԻԿ ՎԱՃԱՌՈՒՄ

ՀԵՐՃԱՅԻ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

ՎԵՐՁԻՆ ԳԻՆ



Եթէ կ'ուզէք ամէն տեսակ գոհարեղէններ ունենալ, աժան ու ճաշակաւոր, թէ՛ արեւելեան եւ թէ՛ եւրոպական ճաշկով պատրաստուած, ժամացոյցներ, արծաթեայ դաւաղաններ եւայլն, դիմեցէ՛ք Պոլիս, Ոսկերչաց Շուկան, Մեծ-փողոց, թիւ 13:

Հարիւրին 20 կանխիկ, մնացեալին համար 100ին 5. շաբաթական վճարում: Կանխիկ գնողին համար հարիւրին 5 զեղչ: Գործածուած գոհարեղէնները եթէ վնասուած չեն՝ 100ին 10 զեղչով եւ կ'առնուին. իսկ ապառիկ զեւաղներէն 100ին 15 զեղչով:

ՏԱՆԵՐԱՆՈՒԹԻՈՒՆԸ

զուակներուն աչաց պայծառութիւնով կը կայանայ. երբ անոնց աչքը կը գունատի, մոածմունքի և նեղութեան պատճառ կը լլայ: Եթէ այսպէս տկարացած տղու մը



SCOTT'S EMULSION

տրուի՝ առողջութիւնը շուտ մը կը վերադառնայ և մտաւ՝ մոռնալը կը դադարէ: Ասանցի Ըսգոթի Բաղադրութիւնը հիւանդութեանց դէմ կը դնէ, և զտղայքը զօրաւոր մեծնալու կ'օգտէ և անոնց աչքերը փայլուն և զուարթ կը պահէ. միշտ

ԸՍԳՕԹԻ ԲԱԴԱԳՐՈՒԹԻՈՒՆ

պահելու է. Ասիկայ զԶեզ և Չեր զաւակները գեղեցիկ և ցաւերէ և յուսահատութիւններէ կը փրկէ: Ուշագիտ պէտ է ըլլալ որ շնոր վրան այս նշանով վարդադոյն փաթիւնը մէջ է՝ եթէ կ'առնէք

ԸՍԳՕԹԻ ԲԱԴԱԳՐՈՒԹԻՈՒՆ

փոշկութիւն առած կ'ըլլաք:

Հիշերու փայ ասոր աշա-
գրութիւն ընել պէտք է:

22

Բոլոր գեղեցիկները և բեղմնավորները և ծախսէն զօրաւոր

“AU COUSSIN D'OR”

ԱՐԵԻԵԼԵԱՆ ՈՍԿԵԹԵԼ ՈՒ ՄԵՏԱՔՍԱ.
ՀԻԻՍ ԲԱՆՈՒԱՄՔՆԵՐՈՒ ճօխ հաւաքածոյ
մը գտնել կարելի է՝ Բերա, Լիւքսէնպուրկի
և Բիւլաքի շէնքերուն միջեւ նոր բացուած
փողոցը, Օ ԳՈՒՍԷՆ ՏՕՌ անունով նորա-
հաստատ փողոցի սիրուն վաճառատան մէջ:
Կնոջակա՝ արդուզարդի և ընտանեկան
նուէրներու յարմար, ինչպէս նաեւ սա-
լօններու զարդարման յատուկ ճաշակա-
ւոր գործուածքներու պէսպիսութիւն մը,
ամէնքն ալ ձեռքով բանուած ու դիւրամատ-
չելի գիներով: Ապսպրանքներ կ'ընդունուին
նաեւ մեծաքանակ պատրաստութեանց համար:
Կ'արժէ երթալ և ՏԵՍՆԵԼ տեղական
արհեստագործութեան և մասնաւորապէս
հայ աղջիկներու ձեռարուեստի այս գեղեցիկ
արտադրութիւնները որոնք մեծապէս կը զը-
նահատուին Եւրոպացիներէն:

ՉՄՐԱՆ ԱՌԹԻԻ

Գնեցէք Կ. ԵԱՎՐՈՒԵԱՆ և Յ. ԻՍԱ-
ԳՈՒԼԵԱՆԻ՝ Զինաստանէն, Հնդկաստանէն,
Ճաւայէն և Սէյլանէն ուղղակի բերել տուած
քարմ, հոսաւեհ և առողջարար թէյերէն,
որոնք ձմրան եղանակին յարմարագոյն ըմ-
պելինի:

Միշտ ուշադրութիւն մեր
վաճառանիչին:

Կ. Պոլիս, Պահէ Գափու,
Ճէյլալ պէյ խան, թիւ 10:

Մասնաճիւղեր Թուրքիոյ
գլխաւոր քաղաքներուն մէջ,
նոյնպէս եգիպտոս:



ԴԱՇՆԱԿԱՀԱՐ ԵՐԻՄԱՍՐԴ մը, որ եւ-
րոպայի մէջ ուսումնասիրութիւններ կատա-
րած է, պատրաստակամութիւն ունի այցե-
լութեամբ դասեր տալ դպրոցներու և տու-
ներու մէջ: Պէտք ունեցողները կրնան դիմել
Մասիսի խմբագրութեան:

ՄԱՍԻՍ

53^{րդ} ՏԱՐԻ, Դ. ՇՐՋԱՆ

ԹԻԻ 46

15 ՆՈՅԵՄԲԵՐ 1903

ՅՈՒԲԵԼԵԱՆԸ

Այս պահուս Պատրիարքարանի մէջ Վարչութեան սեղանին վրայ կը գտնուի պաշտօնագիր մը, զոր Ուսումն. Խորհրդոյ դիւանը ստորագրեց խնդրելով որ կեդր. Վարչութիւնը կարեւոր կէտերը ճշդէ կատարելու համար Ուսումն. Խորհրդոյ յիսնամեակը:

Յիսնամեակին համար ըսելիք մը չունինք ընաւ: Յիսնամեակին չափ պատկառելի է՝ անոր յիշատակը տօնելու բաղձանքն ալ: Կրթական գործին և կրթական Խորհուրդին կէս դարու ընթացքի մը մէջ զուգընթացութիւնը, եթէ մէկ կողմէն կը մատնանշէ, մեր տոհմային կեանքին մէջ մտաւոր զարգացման ապաժաման սկզբնաւորութիւնը, միեւնոյն ժամանակ կը շեշտէ սա կարեւոր պարագան, թէ Ուսումն. Խորհուրդ մը պէտքերու անհրաժեշտ հետեւութեան մը արդիւնքով կոչուած է հսկել ընդհանուր դպրոցներուն կանոնաւոր ընթացքին: Անշուշտ կրթութեան գործը, և գործին հսկելու համար Ուսումն. Խորհուրդի մը գոյութեան պէտքին զգացումը մի եւ նոյն ժամանակ չեն կրնար սկսած ըլլալ: Արդէն բաւական զարգացում պէտք է ենթադրել անհատի մը կամ համայնքի մը մէջ, կրթական հսկիչ ու առաջնորդող մարմինի մը կարենալ ծնունդ տալու համար:

Կեդրոնը՝ քիչ շատ կաղմակերպեալ վիճակի մը մէջ՝ այդ թուականին և անկէ առաջ ունեցաւ իր նախնական վարժարանները, բայց դաւառը՝ իր ամբողջութեան մէջ դրէ՝ թէ զուրկ կը գտնուէր անոնցմէ: Այնպէս որ երբ մէկ կողմէն կը խորհուրդի կեդրոնը օժտել Ուսումն. Խորհուրդով մը, (որովհետեւ պէտք է ընդունիլ թէ Ուսումն. Խորհուրդը աւելի տեղական հանգամանք մը ունեցած է իր նախորդներուն) միւս կողմէ նոյն ժամանակի Պատ-

րիարքը, Յակոբ Արքեպիսկոպոս, իր օրերուն յուզուող բողոքականութեան խնդիրներէն զգածուած, իր «Առ համօրէն եկեղեցական և ժողովուրդս աղբիւ Հայոց ուր և իցեն» ԲԱՆ ԽՐԱՏԱԿԱՆԸ (տպր. 1851) սա բառերով կը սկսի. «Ո՛ր պաշտօնակից հոգեկցորդ հարգատ մեր սիրելիք, արտասուօք աղաչեմք... զի ուշի ուշով կշռելով բերմունս ժամանակիս, ըստ այնմ վարեցիք. նախ Առաջնորդացդ պէտք է աշխատիլ տքնիլ յամենայն վիճակս ձեր՝ և յամենայն դիւրօրէս անգամ դպրոցս հաստատել... և երբեմնակի անձամբ չրջիլ յամենայն վիճակս ձեր, ոչ վասն հաւաքելոյ զդրամս (?), այլ վասն այցելութիւնս առնելոյ սրբոց Եկեղեցեաց և ժողովրդոց և դպրատանց»: Եւ նոյն ժամանակի դաւառական թղթակցութիւններն ըստ բաւականին կրնան մեզ համոզել, թէ դաւառական դպրոցներու բացումը դուռ բացած է այն ատեն նաեւ ոչ նուազ կուսակցութիւններու և վէճերու:

Հակառակ, սակայն, այն ջլատող ուժին դոր նախապաշարումը, և մտաւոր զարգացման չդրոյթիւնը ստեղծեցին կրթական յարկերու հանգէպ, այսօր պատահութիւնը կուսակցութեան կրթական Խորհուրդի մը Յիսնամեակը տօնելու, պահ մը չափելով այն կէս դարու կրթական շրջանը, զոր բոլորեցինք, և որուն՝ ամբողջ ընթացքին հանդիսատեսը և գործադիրները եղան այսօր մեզ հետ ապրողներէն շատեր:

Սոսկ անունին հմայքովը արբենալ, սակայն, առանց իրական արդիւնքի մը խնդիրը յուղելու, այնքան մեծ գաղափար մը կազմել չպիտի տար անշուշտ, ո՛չ Ուսումն. Խորհուրդին, որ Յիսնամեակին դերակատարը

պիտի ըլլայ քիչ օրէն, և ո՛չ ալ այն համայնքին, որ պիտի ծափահարէ անոր յիշատակը: Կրթական գործին արդիւնքը այն միակ հաստատունն է, որ պիտի կրնայ իբրեւ կռուան ծառայել, մեր գաղափարի ու համոզումի շէնքին համար:

Ձեռ յուսար, թէ նոյն իսկ Ուսումն. Խորհուրդը կարող ըլլայ ցոյց տալ մեզի, արդարացումը ի՛ր անունին և Յօդակարին, որ գրական ու կրթական գործունէութեան մը կէս դարը պիտի սկսեց՝ մեր ներքին կեանքին մէջ: Հազիւ մէկ երկու յաջող փորձերէ, և փայլուն գործունէութիւններէ վերջ, մեր Ուսումն. Խորհուրդը, մերթ անուն և մերթ ուղղութիւն փոխած, գայթ ի գայթ քայլեր միայն կրցած է առնուլ իր շարունակական յաջողութիւններուն մէջ: Եւ միջավայրին անհմուտ իր անդամներուն անձեռնհասութիւնը մէկ կողմէն, և տո՛ւմային նկարագրին ճշգրիտ ուսումնասիրութեան թերին միւր կողմէն, պատճառ տուած են այդ Ուսումն. Խորհուրդներուն՝ իրենց գոյութեան ամբողջ տեսողութիւնը ծառայելու նախափորձերու և ծրագրական փորձերու, որոնք իրենց կազմութիւնովը նոյն իսկ իրենց հետ բերած են հոյլ մը անյարմարութիւններու, և որոնք մեր ստորագաս պաշտօնէութիւններու ձեռքով բարեփոխուած և յաճախ յապաւում պիտի ըլլար անշուշտ, որչափ ատեն բարձրին ու նկարագրները ուսումնասիրելու փորձ հոգեբանութիւնը Ուսումն. Խորհուրդի մը գոյութեան կամ կազմութեան առաջը չհայթայթէր: Որովհետեւ կրթութիւնը նոր բան մը չէ որ պիտի ստեղծէ նոր սերունդներուն մէջ. անի պիտի յղկէ ու աղնուացէ միայն, չնորհիւ դաստիարակութեան մեթոտին, որ պիտի հիւրընկալուի, այն բոլոր յարմարութիւնները որոնք իրենց սաղմնային վիճակով կը յայտնուին մանուկ հոգիներուն խորը:

Տղու հոգին ուսումնասիրող այդ իմաստասիրութիւնը պահած է շարունակ մեր Ուսումն. Խորհուրդներէն, ու իրենց կազմած ծրագիրներէն. անոր համար է որ շատ աւելի յաջողած են մեր մէջ այն վարժարան-

ները, որոնք անհատական ճիգերու արդիւնքով և անհատներու իւրացուցած վերլուծող հոգեբանութեան չնորհիւ Ուսումն. Խորհուրդի մը գոյութենէն անկախօրէն կրցած են երևցնել իրենց վարիչ—դաստիարակներուն անձնապէս համոզուած և անձնապէս պատշաճեցուցած մեթոտը կրթական ծրագիրներուն: Ասի այսպէս կը տեսնուի մեր էր խաներուն մէկ անկիւնը: Իր պաշտօնին և իր մեթոտին համոզուած մարդն է որ պիտի յաջողի ի՛ր ալ կրթական ծրագիրներուն մէջ: Եւ հետեւաբար, եթէ Ուսումն. Խորհուրդի ծրագիրներ ու կազմական կանոնադրներ շատ անգամ վիժած են, պատճառն այն է որ Խորհուրդը կազմող անդամներու մեծամասնութիւն մը զուրկ կը գտնուի իր արտադրած ծրագրի մասին հաւատք կազմելու հոգեկան յարմարութիւններէն:

Յօդակարն պիտի գայ ու պիտի անցնի օրուան մը մէջ: Պերճախօս ներքողեաներ, շողշողուն զրուատիքներ և փայլուն տեղեկագիրներ պիտի կարգացուն անշուշտ: Բայց կը վախճանք որ այդ ամէնը «Պահպանիչ»ով մը փակուին, քանի մը լրագրական սիւնակներ դրաւելէ վերջ: Յօդակարն մենք չպիտի փախաքէինք այդ օրուան մը կեանքին մէջ միայն ըմբռնել: Պէտք է որ անոր թողած տղաւորութիւնը անշնչելի հետք մը նշանակէ կրթական գործին վրայ, պէտք է որ հիմնական ու տեսական արդիւնք մը ունենայ անի մեր դաստիարակութեան ներքին շրջանակին մէջ: Ուսումն. Խորհուրդը արդեօք մտածեց այդ կէտին վրայ. մինչև ցարդ անգրագրւած արդեօք իր ծրագրական թերութիւններուն և մեր դաստիարակութեան անհոգեբանական կայութեանը մասին, զանոնք սրբադրելու հաստատ որոշումով մը:

Կիսատալ լը Բօն, անցեալ տարի, Դաստիարակութեան Հոգեբանութիւնը անուն իր մէկ գրքով բուռն յարձակում մը ըրաւ ֆրանսական դաստիարակութեան յուսի ուղղութեանը դէմ, և հիմնական բարեփոխութիւն մը պահանջեց: Անիկա բոլորովին անջատեց կրթութեան և դաստիարակութեան

հոգեբանական ճշմարիտ հիմերը՝ ծրագիրները ու կամ programmeներու շրջանակէն, որովհետեւ ժողովուրդներու միջավայրը, բարքերն ու նկարագիրները ուսումնասիրելով տեսաւ և հաստատեց թէ «միւլենոյն կրթական ծրագիրները համայնքներու և տեղերու համեմատ բոլորովին տարբեր արդիւնքներ կը ծնցնեն»։ Եւ անի ուսուցման բուն իսկ հոգեբանական սկզբունքը սապէս բանաձեւեց. «Ամէն դաստիարակութիւն կը կայանայ գիտակիցը (conscient) անդիտակիցին փոխանցող արուեստին մէջ»։

Յորէլեանը ամենադեղեցիկ աօրթն է այդ արուեստը ուսումնասիրելու, և զանի օգտակարապէս կարենալ ուրիշներուն, կրթական պաշտօնեաներուն փոխանցելու համար։ Ասով միայն անմահացած պիտի ըլլայ ո՛չ միայն Յորէլեանը, այլ և դաստիարակութեան գործը, և արդարացած Ուսումն. Խորհուրդի մը գոյութիւնը։

ՄՈՒՇԵՂ Վ.Ս.ՐԴԱՊԵՏ

ՎԱՌԱՐԱՆԻՍ ԱՆԿԻՆԷՆ

ԲԵՐՍ, 11 Նոյեմբեր
Ներքշարձի

—Մանգումէ... այսօրուան...

Առաջին ձայնը զոր կը լսեմ, երէկ առտու, գլուխս պատուհանէս դուրս հանելուս, լրագրավաճառինն է որ կ'անցնի արագ քայլերով ու կ'աւետէ համակրելի օրաթերթին վերերեւումը(*): Դիւղը, աքաղաղին կանչը ու ոչխարներուն մայիւնը կը լսէինք միօրինակ կերպով, արշալոյսին. հոս՝ Բերայի մէջ՝ պէսպիսութիւն մը կայ առտուան աղաղակներու, և մէկ օրուանը միւսին չինմանիր։ Բնութեան դիպումն մը, այս երկուշարթի, լրագրավաճառին անցքը նշմարել կուտայ ինծի, ու վերստին գրասեղանիս վրայ կը գտնեմ Մանգումէն, բարեկամի մը պէս որ կուգայ նստիլ քովս, նախաճաշի պահուն,

(*) Ծ. Խ. — Խմբագրութիւնս ալ ջերմապէս կը խնդակցի Մանգումէի էֆեմարի վերերեւումը։

հաճելի խօսակցութեան մը ժամանցը պատճառելով՝ իր լեցունիկն ու շահեկան էջերով։

Եւ իրաւ ալ, բարեկամ մը չէ՞ լրագիրը, օրաթերթ կամ հանդէս, որ կանոնադրապէս կը խօսի մեզի հինէն ու նորէն, — գրականութիւն, քաղաքական աշխարհ, գիտական էջեր, բանաստեղծութիւն, լէպ, ֆանթազի, տնտեսական կեանք, ու դեռ բազմատեսակ նիւթեր պարզելով մեր աչքին առջեւ, հետաքրքրելով, տպաւորութիւն մը թողլով կամ բան մը սորվեցնելով։

Մեր մամուլին վրայ խօսելով մասնաւորապէս, — ինչ որ ալ ըլլան քննադատութիւնները որոնք մերթ ընդ մերթ կ'ուղղուին անոր մէջ՝ թերթէ առ թերթ, գրողէ առ գրող, — մտաւորական տենդոտ ու աշխոյժ գործունէութեան մը գեղեցիկ արդիւնքները երեւան կը բերէ ան ընդհանուր կերպով։ Խմբագիրները, սարէց կամ երիտասարդ, հին կամ նոր, կրնան միեւնոյն ուղղութեան չի հետեւիլ, — ինչ որ լրագրութեան համն է արդէն, — գլխովին տարակարծիք ըլլալ հանրութիւնը հետաքրքրող այս կամ այն հարցին վրայ, բայց ասոնցմէ վեր կը մնայ այն անդուլ անդադար աշխատանքը զոր անոնցմէ ամէն մէկը կը թափէ ցօրեկ ու գիշեր իր ձեռնարկած գրական գործին վրայ։ Որ և է թերթ, ըլլայ օրական կամ շաբաթական, հազիւ կէս ժամուան ընթերցումով մը աւարտելու սահմանուած, — ինչպէս են մեր գրերթէ բոլոր թերթերը, — հաւաքական ինչ լուրջ աշխատութեամբ, մտքի և գրչի որքան տատանքով ու նիւթական ալ համեմատապէս մեծկակ ծախքերով է որ երեւան կուգայ. ընթերցողը կը կարգայ ու կ'անցնի, վասնզի ինքը պէտք չունի մտածելու ասոնց վրայ, բայց մենք՝ գրողներս՝ ու մեզմէ աւելի՝ արուեստով խմբագիրները, երբ անդրադառնան ատոր վրայ, դիտելով ճանքան զոր կտրած անցած են՝ բարոյական գոհացում մը, մտքի ու սրտի տարտամ վայելք մը միայն կը գտնեն։ Ասիկայ խոստովանիլը, հայ խմբագրին համար, ո՛չ նուատուութիւն է ո՛չ ամօթ, թէ և այնպէս հաւատացնել ու զողներ գտնուին լրագրական հրապարակի վրայ, լուրջ կամ ծաղրածու տողերով։

Անցեալները բարեկամ մը կը յիշեցնէր ինծի Պարոնեանին սրտառուէ մէկ հատուածը իր հին թերթերուն, — Մեղու կամ Քասրոն, որոշ չէր յիշեր, — օխայով վաճառման տպաւորութեան տակ, զոր հրապարակելէ չէր քաշուած: Այս հրապարակային անկեղծ խոստովանութիւնը միթէ կը պակսեցնէ՞ր Պարոնեանին արժանիքը: Մեծ երգիծաբանէն առաջ ու ետքը մեր լրագրապետներէն քանինէ՞ր ակնաստեա եղած են այդ գործողութեան որ կը կատարուի ո՛չ թէ նիւթական հասոյթի տեսակէտով, այլ խմբագրատան դարակները կամ մթերանոցը թեթեւցնելու համար իր հին փոշելոց բեռերէն որոնց տեղը պիտի գան բռնել նորեր: Մեր խօսակցութիւնը ու վեցուշումը տեղի կունենային խմբագրատան մը խողովակէ մէկ սենեակին մէջ, համանման վաճառման մը պահուն ու նոյն առթիւ, երբ կըողը կը ծանուցանէր անըղգած շեշտով մը — «Եթէ միջ օքքա, սէքսէն օքքա» և այլն, մինչ անոնց տէրը, խմբագիրը, ձեռքերը գրպանը, կ'երթեւեկէր սենեակին լայնութեամբ, մտախոհ ու երազկոտ: Անյաջողութեան մը նշանը չէ, հին դիզուած թերթեր ունենալ, պակաս հաւաքածոներ, սովորական սպառումէն քիչ մը աւելի տըպուած օրինակներ՝ անսովոր խնդրանքներու համար. բայց միշտ տեսակ մը դառնութեամբ է որ անոնց վրայ աշխատողը, ատեն անցնելէ ետքը, կը տեսնէ անոնց դուրս հանուելը, խառնխոռուն ծրարներով, պարկերու մէջ լեցուած, ընթերցումէ տարբեր ձակատագրի մը վիճակուած, օրինակի համար փերեղակին կամ մանրավաճառին խանութը երթալու ուր պիտի ծառայեն... մազի ներկի կամ պղպեղի յատուկ ծրարիկներու պատրաստութեան:

Միջադէպ մըն էր այս, սակայն, որ քանի մը տարին մէկ անգամ կը պատահէ: Սովորականը, թերթին սպառման շատութիւնն է որ հանրութեան գնահատումը կ'արտայայտէ, առթած հետաքրքրութիւնը, և մանաւանդ համակրանքը: Ու ասոնք են որ լրագրապետը, խմբագիրը կը կապեն իր ասպարէզին, փոյթ չէ թէ չհաբըր ըլլայ կամ չըլլայ ան,

չա՛տ աշխատութիւն պահանջէ ու քիչ վարձատրութիւն տայ. նիւթապէս ամուլ ամիսներ բոլորել տայ՝ յաջորդը արդիւնաւոր ըլլալու յուսադրութեամբ. գրողը չի տկարանար, միտքը կը բանի և հարկադրուած է բանելու՝ զինքը արձանագրելու սահմանուած մամուլին պէս արագ ու կանոնաւոր. ընթերցողը իր հետաքրքրուած նիւթերը կ'ուզէ, իր սիրած գրիչները: Պէ՛տք է խմբագրել, թարգմանել, սրբագրել անընդհատ: Բուն խմբագրութիւնը մտաւորական այն մեծ աշխատանքին մէջ կը կ'յանայ որ ամէն օր կը թափուի, ձեռագիրներու ընթերցումին, յօդուածներու խմբագրութեան, նիւթերու դասակարգութեան, բանավէճի, քննադատութեան կամ գնահատութեան նուիրուած: Ամբողջութիւն մը, որ իր պղտիկ երեւցած սահմանին մէջ՝ այնքան զանազանութիւն կընդգրկէ, և որ հանրութեան ներկայանալէ առաջ, մէկիկ մէկիկ պիտի անցնի խմբագրին աչքէն ու ձեռքէն, սրբագրուելով, կոկոսելով, դարդարուելով: Ըսուած է կարծեմ ուրիշ անգամ, թէ տպագրական մեղանին հօտը, խոնաւ «փորձ»երը, տեսակ մը թմրութիւն, գինովութեան պէս բան մը կը պատճառեն որ մտքի աշխատաւորներուն վրայ բարկ հաշիւի մը տպաւորութիւնը կը թողու և որուն վարժողը ա՛լ չուզեր բաժնուիլ անկէ:

Օրուան նիւթերու վրայ պիտի գրէի, և կը տեսնեմ որ լրագրական կեանքին նուիրուած՝ մտածումներով լեցուեցաւ նախկին, լրագրավաճառի մը աղաղակին տպաւորութեան տակ, առտուան առջի ժամուն.

— Մանգուսի... այսօրուան...

Առաջին տպաւորութիւնները ամէնէն թարմը ու տպաւորիչը չէ՞ն մի արդէն:

ՄԵՆԱՍԷՐ

Մասիսի նախորդ թիւով հրատարակուած «Մենասէր»ի երկրորդ նամակին մէջ՝ domaine ֆրանսերէն բառը, տպագրական վրիպակով մը domain տպուած էր զոր յօդուածագիրը կը խնդրէ մեղմէ ուղղել:

ԱՐԵՏԱՐԱՆ ՄԾ(*)



Զօն առ Ազն. Տէր Տոք. Վահրամ Էֆ. Թորգոմեան
ի բարեկամեմ Ռ. Յ. Պ.

Ընդ ա՛յն ժամանակս Յիսուս միայն ընդ Պետրոսի
Տիրերիայ ծովակին գնայր առ եղերը թափառական,
ի ժամուն ուր վերանայ միջօրէի կիզիչ արեւ,
Մինչ ահա, անդ առաջի հիքատեսիլ տընակի,
Յակն անկաւ նոցա այրի կին ձկնորսի սեւասքողեալ,
Որ առ դուրս ի վերայ սեմոց նստեալ էր սրտառուչ,
Ժոյժ ունելով արտասուեացն յորոց թացեալ էին իւր աչք,
Զաղեկատին մանել ըզվուչ և ըզմանկիկն իւր որորել:
Ոչինչ հեռի, ի թիկանց սաղարթախիտ կացեալ թղնեաց,
Վարդապետն և մտերիմ իւր հայէին, աչաց անտեսք:

Յեղակարծումն ոք ի ծերոցն ոյց մօտ առ կո՛ւրծըս կայ դամբան,
Այր մուրացիկ, ի վերայ գլխոյն իւրոյ բարձեալ անօթ,
Եկըն ընդ այն անցանել, և ցոր մանէրն՝ ասէ ցընա՝
«Կի՛ն դու, ըզկաթնալից դանօթս ինձ պարտ է տանիլ
ի տուն ուրուք բընակելոյ ի մերձակայ ի շինին:
Այլ տեսանես, տըկար եմ ես, և ծեր դողդոջ, գայթ ի գայթ,
Տունք առաւել քան ըզհաղար քայլ ի բացեայ կան տակաւին,
Եւ ըզգամ թէ ինձ միայնոյ ոչինչ հընար եղիցի բնաւ
ի գլուխ հանել զայս վաստակ, ընդ որոյ դանդ մի առից վարձ»:

Յարուցեալ յոտն եկաց կինն առանց ընդ բանս ինչ ածելոյ,
Զաղեկատ իւր անդէն ի բաց եթող առանց ինչ վարանաց,
Եւ զորորցն ողորահիւս յորում մանկի՛կըն լայր անհայր,
Էառ դանօթն, և նոյնհետայն յուղի անկաւ ընդ չըւառին:

Եւ պետրոս ասէ.

«Պա՛րտ է ձեռննառու լինել այլոց,
Վարդապե՛տ, այլ ի մըտաց թափեալ թըւի ինձ կինըդ այդ,
Զի զորդեակն իւր և զտունն այսպէս լքեալ եթող և ել չոգաւ
Անձանօթի ուրումն ի սպաս՝ ընդ ճանապարհ գընացելոյ:
Ոչինչ հեռի աստի անշուշտ դիպէր ծերոյդ այդմիկ մուրկի
Ոք որ զամանն ի ձեռաց առնոյր նորին և տանէր»:

Այլ Յիսուս պատասխանի ետ Պետրոսի.

«Ամէն ասեմ,

Յորժամ աղքատ ոք դըթայցէ յաղքատագոյն ոմն՝ Հայր իմ
Ըզտուն նորա յակն առնու և բարգաւաճ կամի ըզնա:
Բարեռք գործեաց կինդ ապաքէն զի ել չոգաւ անդանդաղ»:

(*) Ը. Խ. — Սոյն ծանօթ քերթուածը զոր անցեալ տարի թարգմանած է Պէրպէրեան էֆ. և առթիւ մը ձօնած Տոքթ. Թորգոմեան էֆ. ի, բանասէր բժիշկին քով տեսնելով՝ փափաղեցանք հրատարակել Մասիսի մէջ՝ ինչ որ անակնկալ մը պիտի ըլլայ յարգելի թարգմանչին համար որ համահման անտիպ քերթուածները հատորի մը կազմութեան կը վերապահէ:

Իրեւ ըզբանս խօսեցաւ զայս, եկրն նստաւ Տէր ի վերայ
Հին փայտեղէն նստարանին, հէք հիւղեկին զառաջեալ,
Աստուածեղէն ձեռքն առեալ մանէր վայրիկ մի զաղեկաման,
Որորելով ըզքընարան փոքու մանկանն որ հանգչէր:
Յարեաւ ապա, և ակնարկեաց առ աշակերտն, և զընացին:

Եւ յորժամ ի բնակարան իւր դարձ արար կինն այրի,
Որում Աստուած ըզբարութեան իւրոյ շնորհէր ըզնըշան,
Եգիտ—առանց գուշակելոյ յորմէ՞ արդեօք բարեկամէ—
Ձաղեկատ իւր մանեալ և զորդեակ իւր նիրհեցուցեալ:

Քարգմ. Ռ. Յ. ՊԷՐՊԷՐԵԱՆ

ՖԱՆՏԱՍՏԻԱ ՔՈՒԷ

1902

ԻՏԱԼԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

ԿՐԿՆԵՈՒԹԻՒՆ

(DUALISME).

I.

Ֆլավիո՝ խիղճը բոլորովին հանգարտ կը
զգար. ամենափոքր խզճի խայթ մը անգամ
չունէր: Իրեն պատահածը շատ տարօրինակ
էր թէւ, ի՛նք յանցանք չունէր սակայն:
Ուստի, իր խարտեալ գեղեցիկ գլուխը կը
շարժէր, ուսերը թեթևօրէն կը թօթուէր ու
պարահանդէս երթալը կը շարունակէր. իր աշ-
խարհիկ պարտականութիւնները կը կատարէր
փափուկ շնորհալիութեամբ մը, ու միշտ
ալ ժպտուն, առանց յոգնութիւն զգալու.
Ժամը տասըմէկէն մինչև առտուան ժամը
չորս կը պարէր, ուրախ զուարթ բղթեղով
իր շղարչէ երկար շրջազգեստը. խիստ նեղ
չփակ մը, բարձր կրունկներ, լայնեզր գըլ-
խարկ մը կրելուն համար չէր տրանջար, ինչ-
պէս կրնն կանանց մեծ մասը. ամառը՝ կը
զուարճանար, բարձր դասու, ժամադրաւայր
եղող ծովեղերեայ գիւղերուն մէջ որոնց
գլխաւոր հրապոյրը կը կազմեն ծովու լողանք-
ները, զբօսարանի նուագահանդէսները՝ ան-
խուսալիկի պարի շրջանակով մը վերջացած.
աչնան՝ կը սիրէր գիւղի կեանքը, այսինքն
անտառներուն մէջ երկար պտոյտները, քե-
նիսի մրցումները, ճաշէն յետոյ ճառարակի
խաղերը, այգեկոկորքը և հունձքերը, ձմեռը՝

թատրոնի, զուարճութեանց, այդ շարունա-
կական քնատութեանց կեանքովը կը գի-
նովար: Առանց միջոց տալու, բարեգործա-
կան վաճառքէ մը՝ չմշկումի կ'անցնէր, քօն-
ֆէզդիի պայքարէ մը ետք՝ պահքի քարոզի
մը ներկայ կը գտնուէր: Ամէն պարագայի
մէջ, երջանիկ բնաւորութեան մը տէր էր,
թարմ, կապուտակ, ջինջ, խարտիչագեղ ե-
րիտասարդութեան մը բոլոր հմայքներովը:
Երկու անձեր կը սիրէին զինքը, ի՛նք երկուքն
ալ կը սիրէր ու խիղճը զինքը չէր տանչէր:
Ճակատագրային էր այս, anankè, ինչպէս
կ'ըսեն Յոյները:

Առաջինը, աղնուական երիտասարդ մըն
էր՝ Ֆլավիին ընտանիքին հեռաւոր աղգա-
կաններէն մէկը՝ որ ծնունդի, հարստութեան
կրկին տեսակետերով ալ հաւասար էր ա-
նոնց,—ու աղնուապետական՝ մինչև եղունգ-
ներուն ծայրը: Լէօն Մօնֆիօս ապուշ մը չէր.
ընդհակառակը, սրտի տէր ու խելացի անձ
մը, իրաւ է թէ չափազանց խելացի չէր.
պէտք եղածին չափ խելք ունէր սակայն, և
եթէ ընկերային կարգուսարքերուն կը հպա-
տակէր կամովին, այդ պատճառաւ զինքը
չէին կրնար պախարակել, այդ միջավայրին
մէջ ծնած էր ու չէր կրնար ազատագրուիլ:
Միշտ անթերի կերպով կը հագուէր, բարե-
կիրթ էր, հաճոյակատար ու բարեհամբոյր,
ժպիտ մը միշտ շրթունքներուն վրայ թափա-
ռուն. զժուարահանները զայն անփոփոխ բը-
նաւորութեան տէր կը դաւանէին, թերեւս
քիչ մը սովորական... Սակայն ծեր կիներուն
համար սածած յարգանքը, դեռաւոր աղջկի-

ներուն հետ իր վարմունքին լուրջ վերադա-
հոված, իր բոլոր արարքներուն մէջ ցոյց
տուած ուղղամտութիւնը, իր այդ թեթեւ
բութիւնները ներքի կ'ընէին: Ամէն բանէ
աւելի կը խուսափէր յանկարծահաս սէրերէն,
յախտակութեան խանդոտ թափերէն, ան-
կանոն կիրքերէն. հանդարտ ու դիւր կեան-
քի սիրահար՝ չէր կրնար ըմբռնել բնաւ ան-
սանձ փառասիրութիւնները, յախուռն որո-
շումները, սրտի մեծ յոյզերը, հրայրքները,
բուռն կիրքերը, սաստկացող զգացողութիւն-
ները. հաճելի, անվրդով կեանքի մը յատա-
կագիծը չինած էր. ամէն բանէ առաջ կ'ու-
ղէր օգտուիլ իր երիտասարդութենէն ու
իր անկախ կեանքէն. յետոյ կը մտադրէր
համակրելի էակի մը հետ ամուսնանալ, սա-
կայն առանց արտորալու, յետոյ... հիմակու-
հիմայ այդ համակրելի էակը փնտռելու վրայ
էր:

Այսպէս ահա, գիշեր մը, վախէ մը ետքը
չքասեղանի առնէն, Յլաւիին գրեթէ սիրոյ
յայտարարութիւն մը ըրաւ, որ ակնշիւն մեղ-
միւ մընմանաւ մեծարանքով մը կը սկսէր:
Երկուքն ալ խնդացին, ու յետոյ ա'լ չխոր-
հեցան իսկ. յաճախ իրարու կը հանդիպէին
ու իրենց հակումին հետեւեցան, վայրկեան
մը իսկ չխորհելով կանգ առնել այդ սա-
հուն զառիվայրին վրայ. երկմիտ պարբերու-
թիւն մը, դիմամբ գէշ սքողուած ակնար-
կութիւն մը, խորհրդաւոր ժպիտ մը, եր-
բեմն վերսկսուած խօսակցութիւն մը, այսչափ
միայն:

Սակայն սէ'ր էր այս, — իրենց ըմբռնած
կերպովը — աշխարհիկ սէրը՝ թեթեւ, բուրու-
նաւէտ, նրբին, նախանձի ստուերով մը պա-
րուրուած՝ զայն աւելի համեղ ընծայելու գի-
տումով: Տփղոսն ու տկար սէր մը որ սակայն
կը շարունակէր ապրիլ, այն տփղոսն ու հի-
ւանդկալս բաղձաթիւ էակներուն նման որոնք
կ'ապրին սակայն: Լէօնի երջանկութեան կը
բաւէր որ Յլաւի ամէն առտու, իր նուրբ
գրեթովը դրուած՝ վարդագոյն տոմս մը զըր-
կէր իրեն, երեք տող պարունակութեամբ որ
օրուան ժամանակացոյցը կը դէժէր. իրեն կը
բաւէր որ, իբր թէ պատահական հանգիստումի

վայրկեանին, համախորհուրդ նայուածքով
մը բարեւէր զինքը, ու միշտ պարահանդէսի
մէջ, առաջին վալսը իրեն վերադադած ըլլար.
բաւական էր որ լուրջ որոշում մը տալէ ա-
ռաջ՝ ինչպէս զարդակուցի մը կահաւորումը,
չըջաղգեաթի մը ընտրութիւնը կամ գիւղա-
կան զուարճութեան մը կաղմակերպութիւնը,
միշտ ամէնէն առաջ իրեն հետ խորհրդակ-
ցէր: Բաց ի ասոնցմէ, զայն բոլորովին ա-
զատ կը թողուր ու բան մը չէր պահանջէր,
ծաղրելի ըլլալու երկիւղը կը չեղոքացնէր
զայն ու երեւոյթներուն գերի՝ նախանձոտ
սիրահարի ծաղրելի դերը չէր ուզեր կատա-
րել, հետեւաբար բնաւ փոյթը չէր, թէ Յը-
լաւի հիացողներու ստուար խմբակէ մը շըր-
ջապատուած էր, նոյն իսկ տեսակ մը գո-
հունակութիւն կը զգար: Պատուոյ զգացումն
ալ վտանգուած չէր, քանի որ ինք ամէն
բան գիտէր, և որովհետեւ մարդոց հանդէպ
սքողուած բան մըն ալ չկար...

Դեռատի աղջիկն ալ գիւրաւ կը գոհա-
նար. ժամադրութեանց ճշգրտահ գտնել
զայն ու միշտ իրմէ առաջ ժամանողը, ուն-
կընդրել այն անոյշ ու սիրաւէտ խօսքերուն՝
զորս ըսելու կերպը այնքան լաւ գիտէր. լամ-
բակին անցումը տեսնել նոյն ծաղիկը զոր
ինք մագնորուն մէջ կը կրէր, երբեմն երբեմն
տարհապարակ աշխատութիւններ կատարել
տալ, իր զօրութիւնը հաստատելու համար,
ընդունիլ իր կիսապքող մեծարանքները՝ նըր-
բահիւս ու գրգռանոյշ, որոնք իր վրայ հար-
կադրութիւն մը չէին դնէր բնաւ, այսչափ
միայն: Իրենց շուրջը, օտարներ կը մըմնջէին.

— Ինչ սիրուն զոյգ:

Մոռլքները լուռ կը մնային:

Յլաւիի համար, ճակատագրային դիպ-
ուածը էվէսար կը կոչուէր ու կը բնակէր
Յլաւիին բնակած չէնքին հինգերորդ յարկը:
Նրբամիտ ընթերցողութիւն կռահեց արդէն թէ
խնդիրը բանաստեղծի մը վրայ է, և այդ ն-
թադրութիւնը ճիշդ է, սակայն այս յայտնու-
թեան դժուրակ տպաւորութիւնը պարսկելու
համար, պէտք է յարեմ թէ իր բանաստեղ-
ծութիւնները աղուոր էին, թէ և ոչ մէկէն
կարդացուած: Մեծ կեդրոններու յատուկ

այն դասակարգին կը պատկանէր, ուր ամէն տարի, բարի կամեցողութեանց ու կամքի տէր երիտասարդներու խմբակ մը կը հասնի: Հրաշալի երազներ, սիրային ծրագիրներ կը կուտակուին իրենց գլխուն մէջ, ու սրտերնին գործումն քով կը բարձրանայ, թէև քսակներն դատարկութեան դատապարտուած: Գիւղը մնացած, իրենց ծնողքին խոստացած են իւր- ժան հետ տեսնուիլ, էօքլիտը ճանչնալ, Թուէլան ու Որֆէլան հետ սերտ բարեկա- մութիւններ հաստատել: Սին յոյսեր: Գրա- կանութեան նուիրուած դասախօսութեանց բանաստեղծային հրապոյններուն չեն դիմա- նար, որ զիրենք կը գահավիժէ նորահաս գրագէտներու միջավայրին, գրական ակումբ- ներուն ու արուեստին կնճռոտ վիճաբանու- թեանց մէջ, և բոլոր ասոնք կը յուզուին քսան տարեկան պատանեակներու մտքին մէջ: Այն ատեն... այն ատեն ահա՛ կը կաղ- մուի վիժածներու (raté) այն ինքնուրոյն դա- սակարգը՝ որ ծնունդ կուտայ գունատ, սկեպ- տիկ երիտասարդին՝ իտէլի մը կառչած, ու- րուն սակայն համեմուտ ոյժը չունենար գրե- թէ՛ երբեք և այդ նպատակին հասնելու տեն- չանքէն կը ծիրի, իր փառասիրական յոյզե- րէն կը չարչրկուի ու անկարող՝ վաղեմի ու- ղիդ շաւղին հետեւելու, այդ անհաւասար պայքարէն կը ջախջախուի վերջապէս, ան- հունօրէն տառապելով...: Ու հայրը միշտ գիւղը կ'ապրի, շարունակաբար կը տքնի, կը մաքառի, ինքզինքը կը զոհէ լուիկ ու երազներ կը հիւսէ զաւկին ասպագային հա- մար...: Չեմ գիտեր թէ՛ ո՛րը աւելի կա- րեկցութեան արժանի է. ծերունիին անուշ ցնորքները թէ՛ երիտասարդին մաքառում- ները, յուսահատ անսխառնութիւնը ասպա- գային վրայ: Կ'ըսեն թէ՛ հանճարները այս- պէս կը ծնին. գիտեմ արդէն, սակայն հան- ճարի մը փթթումին համար, որչա՛փ միջա- կութիւններ կ'անէ՛ անան...: Աւելի աղէկ պիտի ըլլար եթէ՛ հանճարը տարբեր կերպով մը յայնուհետէ:

Ասիկա իշխարի կեանքին վէպն է. կըր- նաք աւելցնել նաև խանդոտ սիրտ մը, դիւ- րաւ գրգռուելու հակամէտ ջղային դրութիւն

մը, զոյգ մը բոցեղ աչքեր, ու իր ճշգրիտ դիմաստուերը պիտի ունենաք աչքերնուդ առջեւ: Բնականօրէն, աշնան գորշ, տխուր, մշուշոտ օդով մը, Ֆլավիին հանդիպեցաւ մարմարինէ սանդուխներուն վրայ. բայց Ֆլավի խարտեաչ էր ու կը ժպտէր... Նը- կատողութեան պէտք է առնել նաև թէ Ֆլ- լավի սանդախներէն վոր կ'իջնէր, ու թըշ- ուառ բանաստեղծին թուեցաւ թէ այդ դե- ուտի աղջիկը որ բարձրերէն կու գար, վար- դագոյն ու ոսկեյեռ լոյսի ցոլք մըն էր՝ մը- չուչին մէջ կորսուած: Անչարժ մնաց, առանց չուսչ առնելու. Ֆլավի անցաւ դնաց, մար- դու մը հոգին իրեն հետ տանելով, շղթայե- լով զայն:

Երկար բարակ չպիտի պատմեմ թէ ինչ- պէ՛ս անկէ ետք, ամէն մէկ հանդիպում է- վէսարը աւելի խանդավառեց, թէ ինչպէ՛ս իր սէրը նկարագրեց բոցեղ նամակի մը մէջ, թէ ի՛նչ միջոցաւ այդ տոմսը Ֆլավիին ձեռ- մակ ձեռքերուն մէջ գտնուեցաւ օր մըն ալ. բաւական է գիտնալը թէ Ֆլավի կարդաց այդ տարփոտ տողերը ու այդ ընթերցումէն յետոյ խոհուն մնաց, յօնքերը պռստած, ճա- կատը լուրջ արտայայտութեամբ մը. տոմսը՝ հրաշէկ ածուխի կտորի մը պէս մատերը կ'ալ- րէր և սակայն մէկդի չնետեց զայն... կը թուէր իրեն թէ այդ բառերը բոցեր կ'ար- ձակէին՝ միսերուն հպելով, երակներուն թա- փանցելով, մարմնոյն վրայ սաստիկ տաքու- թեան մը ծաւալումը կըզգար որ սրտէն դէպի ուղեղը կը յորդէր, արիւնը մտրակե- լով. կարծես կէսօր էր, հրաշալի ու կուրցնող լոյսի հեղեղի մը ներքեւ... Տառապանքի որ և է զգայութիւն չունէր. ընդհակառակը, այդ անուշ բոցը՝ որուն ցօլքերուն մէջ հոգին կ'անէ՛ անայ՝ հաճելի էր իրեն: Լէօնը յիշեց, իշխարը յիշեց. երկուքն ալ կը սիրէր...

II.

Այն տեսակ պահեր կային, ուր Ֆլավի՛ անհուն քաղցրութեամբ մը յողողուած կը զգար իր հոգին. կարծես հեռաւոր ձայներ իրեն համար ուստոստուն եղանակ մը կը հա- մերգէին. կարծես մանկական ձեռքեր՝ վար- դի թերթիկներ կը տեղացնէին գլխուն վերեւ:

Տարտամ բնաղդներ, անորոշ տենջանքներ կ'արթննային հողույն մէջ. մեղկ գոյներու կըղձար՝ ուր կ'ստաքօղ երանգները փայլայայտնէր կը թուէին. փակ սենեակներու՝ ուր փողոցին ժխորը գորգերուն բերդոտ թաւութեանը վրայ կը մեղմանար, կ'անէանար. տաք պահող ու բուրումնաւէտ կերպաններու՝ որոնք իրենց շնորհալի ծալքերովը՝ մարմինը կը պարուրէին, նրբին բուրումնաւէտ՝ որոնք շիղերը կ'օրօթէին, կէս թմրութեան մը հեշտանքներովը... և իր անուրջներուն վարդ—կապոյտ ալքերուն մէջէն, թեթեւ ստուեր մը կը դժագործէր որ կամաց կամաց աւելի որոշապէս կը յայտնուէր. Լէօն Մօնֆիօն էր ան, վայելչագեղ, հարուստ, իշխանական սերունդի պատկանող այդ ազնուականը որ իրեն սիրահարուած էր: Կեանքը անոր հետ, երկարատե և անհատնում հրճուանք մը պէտք էր ըլլար, երջանիկ օրերու շարք մը, առանց վաղորդային դառնութեանը, առանց տառապանքի, առանց սեւ կէտի մը: Յիւսկի կը սիրէր զայն. երբ կառքին մէջէն կընդնմարէր անոր անցնիլը, պողպատի պէս տոկուն սրունքներով՝ իր ազնուագէի ձիուն վրայ, սիրտը դէպ ի այդ վայելչագեղ երիտասարդը կը սլանար. երբ երիտասարդին իրեն սեւեռած գորովոտ նայուածքը կը զգար, երբ անոր հմայիչ խօսքերուն կ'ունկնդրէր, ճշմարիտ հրճուանք մը կը զգար: Լէօն Մօնֆիօն իրեն համար ամբողջ աշխարհ մը կը ներկայացնէր—բարձր վայելչագեղ, փափուկ աշխարհ մը՝ նոյնիսկ տառապանքին հանգէպ առկուն, ուր կարելի էր վայելել ամէնէն աւելի նրբացած զգայութիւնները, հարստութեան պարգեւած անվերդ ու անսահման անդորրութիւնը, պերճանքի խորունկ հեշտանքը: Լէօն՝ հանդարտ ու անվերդ երջանկութիւնը, ջինջ կեանքը կը ներկայացնէր: Ու այս սիրոյն ստուգութեամբ կ'օրօրէր սիրտը, կը թմրեցնէր զայն:

Յանկարծապէս զարթնումը կը հասնէր սակայն, ամբողջ էութեամբը ներքին յօրութենէ մը ցնցուած՝ կը վազէր կ'երթար, կուգար, կ'ուղէր իր ձեռքերովը բան մը փշրել անէացնել, գլուխը շատ փոքրիկ կու գար,

իր խառնաշփոթ, յոյզայոյզ մտածումները, սիրոյ ծրագիրները, խռովքի, գործունէութեան, պայքարի համար տածած անդիմադրելի բաղձանքը պարփակելու համար: Այն ատեն, կատարելապէս կ'ըմբռնէր բովանդակ վսեմութիւնը՝ բանաստեղծին ու խորհողին լուռ տքնումներուն, կը հասկնար թէ ինչպէս արուեստը կրնար մարդու մը գերագոյն ըղձանքը կաղմել. կ'ըմբռնէր փառքի տենչը, կ'ըմբռնէր այն երջանկութիւնը որ պարփակուած է թշուառ ըլլալուն մէջ, կորսուած, անծանօթ խուժանին մէջ, ստուար ամբողջին անտես անծանօթ մէկ հիւլէն, ու յետոյ տակաւ բարձրացումը, փողիոջումը, շողարձակ արեգակի մը բովանդակ փայլովը: Էվէսար...: Անոր հետ, սէրը սաստկայոյզ ու ամենահզօր զգացում մը պիտի ըլլար, բոլոր արգելքներուն յաղթող, պարտութեանց դառնութիւնը ամօքող, յաղթութիւնները բարձրացնող, յաղթա'կան, տիրա'պետող սէրը: Աննշան բանաստեղծը կը պաշտէր ազնուական դեռատի աղջիկը՝ որ իր բարձրութենէն կը հակէր, գերագոյն երջանկութիւնը պարգեւելու համար անոր. հպարտ էր այդ տեսակ զգացում մը ներշնչելուն, այդ տեսակ նախանձ մը գրգռելուն համար: Յիւսկի՝ պարահանդէսը քսնուած միջոցին գիտէր թէ, ամայի ու մթաստուեր փողոցին մէջ մարդ մը անհամբերութենէն կը սարսուար, այդ լոյսերով ողողուն տան յետին ծառային իսկ նախանձելով:

Սակայն երբ Էվէսարի խեղճուկրակ ապրելակերպը երեւակայութեանը կը ներկայանար, այն փոքրիկ սենեակը ուր ձմեռը ցուրտէն, ու ամառն ալ հեղձուցիչ տաքէն կը մեռնէր, այն շարունակական զրկումները զոր պարտաւորուած էր ընել, թշուառութեան բոլոր այդ սարսափեցնող մանրամասնութիւնները վերջապէս, երիտասարդին համար իրական հիացում մը կ'ունենար, որովհետեւ այդ մաքառումներուն մէջ իսկ բանաստեղծ կը մնար ան, ու իր իտէալին վրայ ունեցած հաւատքը կը պահէր միշտ: Յիւսկի այդ կորովին հանգէպ, ինքզինքը շատ նուաստացած կը զգար, ինք որ չէր կրնար հրաժա-

րիւ իր ունայն ու սնոտի պերճանքէն, սին ու անօգուտ գոհարներէն, սուղ արդուդար-դերէն. որչա՛փ կ'ատէր բոլոր այդ իրերը, մեղկութեանց մէջ ապրող մարմինը պատժել կ'ուզէր. ցուրտի, անօթութեան, տառապանքի, զրկումներու ենթարկուիլ կը տենջար, ի՛նքն ալ կ'ուզէր սրտին մէջ կրել կորովի ու քաջութեան անսպառելի գանձ մը: Բանաստեղծին հետ ամուսնանալ, անոր կեանքին կեանքը ըլլալ, իր յուզումները բաժնել, մասնակից ըլլալ անոր պայքարներէ, մաքառումներէ, տառապանքներէ կազմուած կեանքին, ո՛հ, ի՛նչ բարձր, ի՛նչ ազնիւ իտեալ...

Եւ այսպէս, այս դուարթ ու անխոյթ դեռատի աղջկան սրտին մէջ, կրկնէութեան հրուշափ արամիրգութիւնը կը յուզուէր՝ ուր երկու հաւասարապէս ուժգին ու հակընդդէմ զօրութիւններ իրար կը բաղխէին. իր հակումները՝ որոնք մինչեւ այն ատեն տարտամ ու շնորոյ եղած էին, կը բաժնուէին երկու ներհակ ընթացքներու հետեւելու համար: Հիմակ իր կեանքը՝ փոփոխակի այդ շրջաններէն կ'անցնէր, ու այդ երկու սէրերը զիրար յաջորդաբար կ'անէացնէին, յետոյ աւելի ուժգին կերպով վերապրելու, ու կրկին պայքարելու համար: Սակայն չէր տառապեր, և նոյնիսկ հոգեկան իր այս տարօրինակ վիճակին մէջ, իր էութիւնը գոհունակ ու կատարելապէս ամբողջացած կը զգար, կարծես իր հաւասարակշռութիւնը գտած էր: Այս յաւիտեական վարանքները, տարտամութիւնները զինքը չէին վրդովեր, իր բնական վիճակն էր այդ, իրեն համար հասկընալի էր...

Յլալի ծնած էր խառն ամուսնութենէ մը. հայրը բարձր դասակարգի կը պատկանէր, մինչ մայրը ժողովրդական ծագում մը ունէր, և իւրաքանչիւրը իր սեպհական ներկարադիրը փոխանցած էր անոր: Մօրը կարշնեղ կաղմուածքը ունէր, անոր պարզ ու բարձր ճաշակները, պայքարելու տենջը, պարկեշտ սիրտը: Իսկ հօրմէն ժառանգած էր ջղային դրութեան փափկութիւնը, հոգեւոյ բարձր թռիչները, հոգեկան նրբութիւն-

ները: Վերջապէս, երկու ներհակ էութիւններ պարփակուած էին իր մէջ, որ մէկ հատի մը կը յանգէր, միակ էութիւն մը կը կազմէր: Ու Յլալի յափշտակուած էր հոգեկան միութիւնը ձեռք բերած ըլլալուն համար:

III.

Երկու երիտասարդները որոնք դեռատի աղջկան սրտին մէջ անդիտակցաբար իրարու հանդիպած ու այնքան լաւ ձուլուած էին հոն, իրական կեանքին մէջ ալ նոյնպէս իրարու բաղխեցան և դիտնալով թէ միեւնոյն նպատակին կը դիմեն և հետեւաբար հակառակորդ՝ սկսան իրարու գէշ աչքով նայիլ: Լէօն՝ Էվէսարը քաջասիրտ յիմարի մը տեղ չըաւ. իսկ Էվէսար՝ Լէօնը անապարձ անսիրտ մը նկատեց: Բնականաբար զիրար չէին կրնար հասկնալ ոչ ալ զնահատել, սակայն անդիտակցար նոյն բնադդական շարժումը ունեցան, որովհետեւ յաջորդ օրը, Յլալի գրեթէ նոյնիմաստ երկու նամակներ կը ստանար, որոնց բուն իմաստը սա բառն էր: «Ընտրե՛ցէք»:

Ցաւազին ապշութիւն մը զգաց, սիրտը սեղմուեցաւ՝ ինչպէս մեծ դժբաղդութեան մը յայտնումին հանդէպ. կարծես այն ա՛նգլի մղձաւանջներէն մէկուն ազդեցութեան ներքեւ էր, երբ առանց կենալու, անհուն րարձրութենէ մը վար կը դահավիժիս. և որուն պատճառած տագնապը մինչեւ արթննալը կը տեւէ: Ընտրե՛լ: Պէտք էր որ ընտրէր... ինչո՞ւ համար: Այնչափ երջանիկ եղած էր, և իր կեանքին մէջ այլեւս պակաս մը չէր ըզգար, այդ կրկնակ սիրոյն շնորհիւ: Ընտրե՛լ: Ո՛րը... Հաւասարապէս կը սիրէր զանոնք, կը զգար թէ երկուքն ալ պէտք էին իրեն, կը հասկնար թէ անոնց անունը իր սրտին մէջ քանդակուած էր, ու դէմքերնին՝ հոգեւոյն խորը զրոյմուած...: Անկարելի էր զանոնք սրտէն խլել ճանել, անկարելի, բացարձակապէս անկա՛րելի: Անխառ բաներ կը պահանջէին իրմէ, ու ինք այդ պահանջումներուն դէմ կ'ընդդէմէր: Ամէն բան կը խորտակուէր, անուրջը կը փչրուէր, կ'անէանար, աղուոր ներդաշնակութիւնը վրդովուած էր, հանդարտութիւնը՝ աներևութացած: Պէտք


էր ընտրութիւն մը ընել, այսինքն միայն մէկը սիրել, մէկ սէրը միւսին զոհել, զինքը կազմող էութեանց մէկը լռեցնել, այսինքն իր էութեան կէսը անէացնել: Նախ ջանաց հընազանդել, ուղեց որոշում մը տալ, փաստեր կուտակեց որոնք երկու սիրահարներէն մէկուն դատը պիտի պաշտպանէին ու զայն յաղթական պիտի ընէին. նոյն իսկ որոշում մը տուաւ ու փորձեց այդ որոշման վրայ հաստատ մնալ, սակայն անօգուտ եղաւ. վայրկեան մը ետքը միւսը կը յիշէ: Յիշողի տխուր օրեր անցուց, ուժաթափ, յուսահատած, չարչկող երկմտութեանց խաղալիկ՝ դժնդակ վարանումներու մատնուած. անտանելի վիճակ մը վերջապէս: Այն ատեն, կատարեալ լքումը, անողորմ տառապանքը նախընտրեց. իր երկու սէրերէն ալ հրաժարեցաւ: Լէօն ու Էվէսար զայն սովորական պէրոնէի մը նկատեցին, և ա՛ն չհաճեցաւ իսկ իր սրտին խորհրդաւոր գաղտնիքը բացատրել անոնց:

Սարտեաշ աղջիկը շա՛տ տառապեցաւ. անքուն գիշերներ, տխուր օրեր յաջորդեցին իրարու, սակայն իր տառապանքը տակաւ մեղմացաւ, նուաղեցաւ, անհետացաւ: Իրեն համար, սէրը հիմայ հեռաւոր յիշատակ մը եղած է, երջանիկ օրերու հիւսք մը՝ որ հիմակ ա՛լ անցեալին կը վերաբերի, ջնջուած ու աղուոր շրջան մը: Երկրիս վրայ ապրող էակներէն շատերուն պէս, սիրեց ինչպէս որ կրնար սիրել, և իր այդ երկու սէրերուն մէջ ամփոփեց իր կեանքին մեծ սէրը:

Թարգմ. Լ.ՏԼՎ.ԱՅՍ

ՄԱԹԻՆՏ ՍԷՌԱՍ

ԼԱՆԳԱՆԱԿ



Անեզր անգունդ, արտամութիւն անյասակ, Այն միջոցը զոր մեր մեջքեղը դրին, Արհաւարայից մութ ուղիքան՝ օրուն ցակ Կը բաւալի անհուն յորձանգ մը լռին:

Եւ ես՝ սիրոյ մեծ կրօնքին անհասակ՝ Զգուած բաղդին, կոհակին ու փրփուրին,

Կը խաբխաբիմ, բնկղմելու միտ արտակ, Այդ մութին մէջ՝ սպառնացող ու խո՛րին:

Բայց մերթ քու նուրբ ու մեյանուց ցոյժերէն Լոյս—համբայ մթ կը ցոյլալ մութ ծովուն մէջ, —ձիւղ ինչպէս երբ ծաթի լուսնակը վերէն:

Ու այն ատեն, բոլոր հոգիս հմայուած, Կըզգամ քե այդ լոյս—համբուն մէջքէ Ասուած Եւ կը պաշտեմ քեզ ո՛վ լուսնակըս անեջ:

Վ.

ՏԻՂՄԻՆ ՄԷՋԸ

Իերան՝ կը խողտայ կաղի կտուցներու իր պսպղուն հոյլին տակը:

Ամէն գոյնէ ու ձեւէ անցորդներ, հակասական ու տարօրի՛նապէս փոփոխական այլադասութիւններով, իրար կը հիւսուին, մէկ կողմէն միւսը, տենդոտ ու տաքնապալի անցուդարձով մը, միջնադրի ոգեւոր պահուն, յուզումնալից, շարժական, եռեււոյն—կենսախայտ ժխոր մը սարքելով քաղաքին կենդանի ոգեւորութեանը մէջը: Օդակաղի կը տուցներէն կաթկթող տկար ու նուաղկոտ ցոլքերը աղօտ լուսափաղփութիւնով մը կը ջնարակեն անցորդներուն դէմքերը, անոնց այլադասակ արտայայտութիւնը կենդանացնելով, խնդուն, ընկճած, զայրացկոտ, յոգնութենէ կքած, եռանդնաբորբ, անփոյթ, ու ամէն ան կերպերով, զորս մարդոց աններդաշնակ տրամադրութիւնները կրնան պատկերել դէմքերու վրայ:

Անփոյթ անձնատուութիւնով մը աննըպատակ թափառումին ու ժամանցի հաճոյքին, բաղամարտի մայթին երկայնքն ի վեր կը դեգերիմ, ամբոխին շարժումներովը դրաշած մտովի:

Կ'անցնին, կը դառնան, կը սահն քովդ ի վեր, անցորդները, հակասական շարժումներով ու ակնարկներով, որոնք իրար կը հերքեն, իրար կը հեղնեն, խառնակ ամբողջութեան մը մէջը լուծուելով:

Ամբոխին մէջը, քանի մը քայլ անդին,

մէկը կը զարնէ աչքիս, գրգռելի աղջիկ մը, զոր ճանչնալ կը կարծեմ ու մէկուն կը նմանցնեմ:

Կը մօտենամ: Ան է, դրացուհիս, Աղաւնին, որ միս մինակը, աղատեն, կը թափառի փողոցները, գիւղէն անչափ հեռու, Բերաի պէս տեղ մը:

Կը զարմացնէ զիս անակնկալը:

Կը հետեւեւի իրեն, քիչ մը տեղ: Քաշուելու պէտք չեմ տեսներ, խօսքի բռնուելու համար հետը: Պզտիկուց մէկտեղ մեծցած ենք, քոյր-եղբոր պէս, ու լուսին գիշերներ, դուռներնուս առջեւը երկնցող դարաստանին վրայ, թեւ թեւի ժամանակ անցուցած:

—Ո՛ւր ասանկ, Աղաւնի,—կ'ըսեմ,—քրորջու պէս...

Ետին կը դառնայ, ու զարմացական սթափու մով մը, ուր ամօթխած վարանք մը կը թրթռայ:

—Հի՛շ, հոս եմ... աս գիշեր... մօրաքրոջս եկած եմ... քիչ մը դուրս ելայ...

Կասկածը կը կաթի. ներսս Աղէ՛կ գիտեմ, մօրաքոյր չունի հոն. կը ստէ, քողարկելու համար գաղտնիք մը, որ հետզհետէ տանջել կը սկսի զիս:

—Մօրաքոյրդ ո՛վ է հոս, սուտեր մի՛ քշեր ինծի, Աղաւնի,—կ'առարկեմ,—ինձմէ՛ ալ պահել կ'ուզես ամէն բան...

—Ամա՛ն դուն ալ, ինչո՞ւդ պէտք, ասանկ կը պտտիմ կոր,—կ'աւելցնէ մտերմօրէն,—ուշատեն տուն պիտի դառնամ...

Ու համարձակ շարժումով մը, թեւը իմինիս կ'անցընէ, կուրծքին հեշտալի փափկութիւնը հպեցնելով գրկուած թեւիս:

Պզտիկ առաջարանէ մը ետքը, չվարանիր բացուելու ինծի,—քաշուելու ո՛չ մէկ պատճառ ունի, ա՛նչափ մտերիմ ենք իրարու,—պատմելով ի՛նչ գաղտնիք որ ունի հոգիին խորը ծրարուած:

—Տունէն փախած եմ...:

Կը շարունակէ յանկարծ.—ի՛նչ ընեմ, մինչև ե՛րբ հաւնոցիս անկիւնը պիտի ճգնիմ, մենք ալ հոգի ունինք, մարդով կ'ըլլանք: Անցած օր, Երուանդին հետը եկայ. Բերա,

քիչ մը պտտեցանք, ասդին անդին ժամանակ անցուցինք քիչ մը,—ապրիլ, աշխարհք տեսնալն ալ ուրիշ բան է,—գիշերը հոս կեցանք, օթէլ մը, ամէն բան աչքէս հաներ եմ, մոռցած եմ ամէն հաշիւ, ի՛նչ պիտի ըլլայ տունը նստելուն վերջը: Իս կը սիրէ Երուանդը, հոգիէ՛ն կը սիրէ. պիտի առնէ ինծի, երջանիկ կ'ըլլանք երկուքս ալ, ցորեկները դործին կ'երթայ, իրիկունը կուգայ կը գտնէ զիս. ծանօթ մէկուն տունն եմ, ուրիշ երիտասարդներ ալ կուգան կ'երթան հոն, սքանչելի կը զուարճանանք, աղւոր է աս կեանքը, ի՛նչ ընեմ, շատեր շատ բան պիտի ըսեն, սիրելը, սիրուել ուղեւը ամօթ է: Պիտի ըսես որ, աղ տղան քեզ կը խաբէ, ասօր վաղը հետդ կ'իյնայ կ'ելլայ, միւս օր երես կը դարձնէ քեզմէ, կը մոռնայ. ի՛նչ ընեմ, եղածը եղաւ արդէն: Հիմա ամէն բան քայքայուեցաւ, ամօթ, աղջիկնութիւն: Ամէն մարդ հոգի կուտայ վրաս, աղւոր եմ, հարկաւ մէկը կը գտնամ սիրտս հասկցող: Ի՛նչ ընեմ, դեռ սպասե՛լ. տարիքս եկաւ կ'անցնի կոր: Դուն չե՛ս գիտեր թէ աս տարիքը աղջիկ մը ի՛նչեր կըզգայ ներսը: Միտքերս ասոնք են. եթէ յաջողին՝ աղէկ թէ որ չյաջողին՝ կ'երթամ տուն մը կ'իյնամ... լըմնցաւ գնաց. ըլլալիքը ի՛նչ է... արդէն խենթի պէս ետեւէս ինկած եմ, ու մէկ քանի անգամ ալ տարին զիս տուն մը: Գէ՛շ է, դըրամ, հաճոյք... ու կեանք... աշխարհքը ի՛նչ բանի վրայ կը դառնայ...

—Է՛ մայրդ, հայրդ, տեղեկութիւն ունի՞նք քեզմէ. ըրածներէդ,—կը հարցնեմ, սարսափած աս յայտնութիւններէն,—քեզի չե՞ն փնտռեր, ի՛նչ պիտի ըլլան՝ եթէ լսեն վիճակդ...

—Գնա բա՛նդ դուն ալ,—կը հեզնէ անտարբեր,—գիտես որ չե՛ս ճանչնար մեր պառաւները... մէկը մայրս, ցնդածին մէկը, ինքզինքին տէրը չէ, հայրս ըսես՝ քովը ըրածդ չտեսնար: Ալ զգուեցայ իրենց երեսէն: Մինչև ետքը աղ խռթածները պիտի քաշեմ ես: Քովերին աղջիկ ունենալնին անգամ չեն գիտեր: Չեն հարցներ, չեն փնտռեր թէ՛ դուն ալ մարդ ես, հոգի ունիս, գործեր կ'ան՝ ո՞

րոնք պէտք է կատարուին լմնան: Փատի պէս քովերնին տնկուէ՛ կեցիր, տարիներով, տարիներով: Ձեն մտմտար վիճակդ, երեսդ չեն նայիր, սիրտէդ անցածը չեն հասկնար. հոգերնին անգամ չէ՛. երեսդ անգամ չեն նայիր, հա՛ եղեր ես, հա՛ չես եղեր. միտքերնուն չեն անցըներ թէ աղջիկ ունին, ի՛նչ պէտք է ընեն. անտեղուա՛նքը անգամ չեն, ապուշի պէս բաներ. քովերնին կեցի՛ր կեցիր. ի՛նչ ըլլադ անգամ չեն գիտեր. աչքդ դո՛ւրսն է, ներսն է, խելդդ ո՛ւր տեղուանքն է, գլխէ կ'ըլլա՞ս, սխալ ճամբայ մը կ'երթաս, հոգերնին՝ անգամ չէ. ի՛նչ տեսակ՝ դաւիլի տէրեր կ'ան աշխարհքի վրայ: Վերջապէս գըլուխս եկաւ ահա՛ փորձանքը: Օրին մէկը աս երուանդը տուն գալ-երթալ սկսաւ. տուներնին երիտասարդ տղայ կը մտնայ-կ'ըլլայ, ի՛նչ կրտսն տեսնողները, ատոր հետեւ անքը ի՛նչ կ'ըլլայ, ճահիլ աղջկան մը համար, անտեղուա՛նքը անգամ չեն. ասանկ ծնողք չե՛մ տեսեր որ ես: ի՛նչ որ է. գէշ տղայ չէ երուանդը, քեամիլ, խելքը դուլը, քիչ մըն ալ մարդուն խելքը զլխէն առնող, ի՛նչ պիտի ըլլար, վերջապէս սիրտ տուինք իրարու, երկու ամիս ասանկ ապրեցանք, ամէն օր մեր տունը: Ալ ամէն մարդ դործը հասկընալ սկսաւ. աչքերնուս գէշ նայիլ սկսան: Տարիներով ատանկ կենալ չէր ըլլար, բան մը ընելու էր վերջապէս. օր մը խօսք մէկ ըրինք՝ փախչելու տունէն, ո՛վ որի, ո՛վ տեղեկութիւն ունի. հայրս-մայրս: Վա՛յ իրենց: Հայր—մայր ըլլան: Երկու ցնդած, տունին անկիւնը, քիթ քիթէ չեն դատուիր. դիտես որ երէկ կարգուեր են դեռ. իրա՛ր կը տեսնան մի՛նա՛լ. մայրս տեսնես. առտուընէ մինչև իրիկուն էրկանը քովը, անոր քիթն ի վեր, անկիւնը ծալուած վիշէն չբաժնուիր. սենեակին դուռէն դուրսը չեն տեսնար. իրենց համար կայ չի կայ աղ կեանքը կայ...: Ասա՛նկ, օր մը, երուանդին հետը, երկուքս մէկ, անհետացանք տունէն: Փնտռո՛ղ անգամ չեղաւ մեզ. ո՛վ որի. մարդ կա՛ր քովերնին, չիկա՛ր. գիտցող կա՛յ: Ան գիշերը Բերա անցուցինք. կեանք կայ եղեր աշխարհքի վրայ: Անկէ ետքը ինծի սենեակ մը բռնեց, գիշերները կուգայ, աղէկ ժամանակ կ'անցը-

նենք, իրարմով կ'ապրինք: Ձիտեմ, ասոնք աղէկ, մինակ քանի մը օր է երեւցած չունի. սատանան փո՛րը մտաւ ի՛նչ. հո՛գս, իր չիգալէն ի՛նչ կ'ըլլայ, միւս տղաքը ողջ ըլլան. հիմա բարեկամ չա՛տ, աղաւնիի պէս կը պահեն զիս: Գիտե՛մ, պիտի չհաւնիս աս ընթացքիս, պիտի ամօթես, ի՛նչ ընեմ, եղածը եղաւ. ի՛նչ ընէի. քաշուելի՛ք բան էր կեանքս ատա՛նկ, տարիներով: Գիտե՛մ, աս կեանքին օր մը վերջը կայ. իյնալը կայ. կը գուշակեմ. կարճ ժամանակի մը համար են ասոնք. հիմա շուրջս դարձողները՝ օր մը պիտի զգուին ինձ մէ. հեռանան, երեսէ ձգեն, լքեն. է՛հ, ան ատեն ալ կ'երթամ կ'իյնամ հոն, ուր մեր վիճակի աղջիկներուն վերջին ապաստանաբանն է: Հիմա, ա՛լ մէյ մը ինկայ աս վիճակին մէջը, ի՛նչ ալ ըսեն՝ չեմ կրնար դուրս ելլել. թող ամօթեն, բամբասեն, լսնդան վըրաս... ի՛նչ ընեմ... ընել տուին:

Ինքզինքնիս մոռնալով, ամբօխէն հեռացեր էինք, մինչև մենաւոր ճամբաները աղմըկալից քաղաքին, մինչև Բանկալթիի եղրերը:

—Ա՛, ատենը ուշացեր է, երթա՛մ ես, երթամ—ըսաւ վերջացնելով—ասանկ եղաւ, ի՛նչ ընես, մինակ, քեզմէ բա՛ն մը լսնդեմ. գեղ եթէ երթաս, մարդու բան մի՛ ըսեր, ո՛ւրքդ պաղնեմ...

Ու թեւը ազատելով անութէս, դարձաւ, աճապարոտ քայլ մը առնելու վրայ, դարձի ձեւէն կէս մը ծռած՝ երբ դէմը մէկը կանդնեցաւ, զինքը ճանչնալու վարանքին մէջը տարուբեր:

—Օ՛, դուն ես Օննիկ, —ձայնեց, խնդադին ու լկտի քծինքով մը, —հայտէ՛ մէկտեղ երթանք: Ու անվարան, անոր թեւը առնելով, անհետացան մութին մէջը, երբ աչքս կը թափառէր ետեւուն:

×

Գեղին է՛ն խօսուած աղջիկն էր Աղաւնի: Անչաւք տունի մը անկիւնը ծնած իր խնթեցնող աղւորութիւնը, —աղքատի դաւակները երբ աղւոր ծնին, աղւորութիւնը կ'աստուածացնեն իրենց վրայ, —ւ մարմնական անդիմադրելի շնորհները՝ ամէնուն հը-

բայքը իր վրայ էին դարձուցած, գեղին բուր երիտասարդներէն մինչև քիչ մը տարիք-նին ու կեանքին համը առած, սիրտներին չմարդ տարեցները, որոնք անկուշտ աչքով մը կը վերաբերուէին իրեն հանդէպ:

Սէրի, Կիրքի, Հրապոյրի ուժերը, իր քովը բուն թափով մը կը վրթկային, ու ինք դեռ շատ պղտիկուց, եղած էր ան աղջիկներէն, որոնք բան մը կը խոստանան ըլլալ, և իրենց վրայ կեանքի աս սրբօրէն բարձր գացումները, պոռթկացող գեղումով մը կը թռթռան, անդիմադրելի, անդուսպ, վայրագ կատաղի երեւոյթներու տակ:

Ասոնք իրենց սանձարձակ սլացքը չէին գտներ սակայն իր քովը, մանկատիութեան, ամօթի ու ընկերական վիճակներուն ստեղծած զսպումներուն հետեւանքովը, — աղ իսկ պատճառով, օ՛ր օրի աւելի սաստիկ ու անգլխադրելի թափ մը առնելով: Ու ծնողական սանձը՝ իր դերին մէջը չարաչար տկարութիւնով մը կը վրիպէր, կարենալ մեղմելու համար անոնց ուժը:

Ասանկ, կիրքը անսանձ վիժումով մը կը պոռթկայ օր մը իր ներսը, հո՛ն կաթեցնելով յադեցումի կոտորացող ըզձանքը, որ քիչ կամ շատ անմեղ սիրաբանութիւններէ ետքը, ներկայացող արուին հետը, կը վերջանայ աղու մը հետը ազատ մէկ կողմ անցնելով — մոլորանքի ճամբուն առաջին քայլը, երբ ոչ մէկ արգելք կամ սանձ կայ կասեցնող զինքը:

Շլմորած ու անգլխակ, անոր նախնական խաբող հրապոյրներէն, ան կ'երթայ աղ ճամբան, անվախ ու համարձակ, չկրնալով մտաբերել թէ, ո՛ւր կ'ը հանէ ան:

Ճամբուն տարտամ ու վաղանցիկ շքեղութիւնները՝ կասկածոտ անստուգութիւն մը չէ՛ն տար իրեն, ու աչքերը զոց, մտացի խարխալքով, չկրնար ան ընդգրկել ըրածին նշանակութիւնը՝ ան կը նետէ քայլերը առաջ, քիչ մըն ալ աւելի ու քիչ մըն ալ հեռուն:

Հիմա հասած է սակայն տիղմին սահմանները, ու ոտքերը կը պլշկին անոր. քանի՛ քայլը նետէ, քանի՛ շարժում մը ընէ, աս կամ ան կողմը:

Ան չզգար դեռ, չհասկնար զինքը շրջա-

պատող երեւոյթին նշանակութիւնը. մինակ կը քալէ ճամբուն անձանօթ ու պատրանքոտ շողարձակումներէն հրապուրուած, որոնք զինքը կը շոյեն, զինքը կը կանչեն իրենց կողմը. Կ'անսա՛յ ան աղ ճայնին, ու կը թափառի շուրջի կայքերուն մէջը:

Քանի՛ ոտքը քաշել կը ջանայ տիղմէն, աւելի՛ կը մխրճուի վար. ետ կը շարժի, նո-րէ՛ն կը խորասուզուի:

Ճամբուն դիւթանքները կը հրճուեցնեն զինքը, ու ան չո՛ւղեր անոնցմէ բաժնուիլ, հոգ չէ թէ ոտքերը ցեխին պլշկած ըլլան:

Իր շուրջը կը բլզան, կը թրթռան աղ հաճոյքները, անհամար մեղուներու պէս, իրարմէ աղւոր, իրարմէ դիւթական, ոսկեղօծ տողանցք մը ձեւացնելով իր շուրջը:

Հաճոյք-թիթեռնիկները սակայն, որոնք իր թարմ ծաղիկի գեղանի տեսքէն հմայուած կը յածին հիմա իր շուրջը, օր մը երբ կարօտին առնեն իր խնկոտ բոյրէն, շո՛ւտ պիտի հեռանան, մոռնալով ամէն գեղ:

Ան ատեն, հիասթափումը պիտի հասնի, քողին պատուելէն ետքը, ու ան պիտի տեսնէ թէ, ցեխոտ ճամբաներուն ծայրերը ո՛ւրեր բերած են զինքը, ուրկէ դառնալ կարելի չէ:

Իր հիւթը ծծուած ու թարչամած հրապոյր — ծաղիկը՝ գլուխը պիտի ծռէ — վտիտ, խամրած, արեւադուրկ, եղկելի:

Ու գլխիկոր թաւալումով մը, պիտի գլորի կորստաբեր անդունդը ճախճախուտքին, հոն լողալու համար թշուառականօրէն, լղրճուած, գարշացած, նեխած անոր աղտեղութիւններէն, ա՛նել, անդարձ, մինչև կեանքին վերջնական մահացումը, պիտի կորնչի գեղանի ծաղիկը. — սանձող, գուրգուրացող ձեռքի մը պակասէն որ իր ոտը պիտի ըլլար ամրապլնդ ու հզօր բազուկը՝ ծաղիկը՝ իր բունին վրայ բռնող:

ՆՆՈՎԱԿ ԱՐՄԷՆ

Վերջին պահուն ստացանք յոգուած մը Ռ. Յ. ՊԵՐՊԵՐԵԱՆ ԷՖ.Է

«Տ. ՄԵԼՔԻՍԵՂԵՅ ՍՐԲԵՊԻՍԿ. ՄՈՒՐԱՏԵԱՆՅ»
գոր պիտի հրատարակենք յաջորդ քիւով, ուր պիտի սկսիքն Գաւառ Գրական Գերբօն մը ԲԻԷՌ 1.07.ԻԷ:

ԼԻԼԻԵՆ ՄՕՐՐԻՍ

11.

(LILLIAN MORRIS)

Դրեց ՀէնՐի Բ Սէնթիէլի2.

Թարգմ. Չիֆթէ-ՍՍՐԱՅ.

Բայց երկինք աղօթքս չէր ընդուներ և մարտիրոսութիւնս կը սաստկանար:

Վեցերորդ օրուան առտուն, Լիլիէնի դէմքը ու ձեռքերը բորբոքած պուտիկներով ծածկուեցան. չնչառութիւնը դժուարին ու հեւքոտ էր: Յետոյ, տարտամ նայուածքով մը երեսս նայեցաւ, և աճապարանքով, իբր թէ վայրկեան մը վերջը գիտակցութիւնը կորսնցնելու վախովը համակուած՝ ըլլար, ըսաւ.

— Ուա՛լֆ, դացէք քովէս: Փախէ՛ք, ինքզինքնիդ ազատեցէք: Յոյս չիկայ ինէ:

Ակռաներս կճրտացուցի, որովհետեւ ոռնումներ ու հայհոյանքներ կուգային, կը դիզուէին չրթունքիս վրայ: Յաջողեցայ ինքզինքս զսպել և իր ձեռքերը բռնեցի: Կրակէ զիկղակներ կըսկսէին երթիւնկել աչքերուս առջև, որոնց վրայ կը կարդայի. — «Այն որ Արարիչէն աւելի արարածին յարգ կը մատուցանէ...»

Թեւերուս մէջ առի Լիլիէնը, դէթ իր մարտիրոսութեան մինչև վերջը, կուրծքիս վրայ կրելու համար դայն: Նրբեք պիտի չի գիտնամ թէ ո՛ւր գտայ այդչափ ուժ: Վայրկենապէս, անդգայ դարձեր էի անօթութեան, տաքութեան, տառապանքի: Դէմս բան մը չէի տեսնար ալ, ոչ մարդ, ոչ դաշտ: Լիլիէնը միայն կը տեսնայի: Նոյն գիշերը իր վիճակը ծանրացաւ: Զգայութիւնը կորսնցուց. երբեմն երբեմն մեղմօրէն կը հծծէր.

— Զո՛ւր, Ուա՛լֆ: Օ՛հ, ի՛նչ տանջանք...

Պակցամատ ու աղած միս միայն ունէի իրեն տալու. ջուրը հատած էր: Յուսահատած, ձեղք մը բացի բազուկիս վրայ, արիւնովս թրջելու համար իր չրթունքը: Այդ վայրկեանին խելքը գլուխը եկաւ, նշմարեց ըրածս, սուր ճիչեր արձակեց, և ինկաւ խորունկ թմրութեան մը մէջ՝ ուրկէց կարծեցի որ ա՛լ ելլալիք չունէր: Մինչդեռ ինքզինքին

եկաւ նորէն և ուղեց բան մը զրուցել. բայց տենդը խանգարած էր իր միաքին կարողութիւնները և մրմնջեց ժպտելով.

— Մի՛ բարկանաք, Ռալֆ: Ձեր կինն եմ ես:

Ձի պատասխանեցի: Յաւէս ապուշ կըտրած էի:

Եօթներորդ օրն ալ լուսցաւ: Սիէրրա Նէվատան վերջապէս կ'երեւար հորիզոնին վրայ: Ամբողջ օրը տեսանք իր ձիւնապատ գագաթները: Բայց երբ արեւը խոնարհեցաւ, Լիլիէնի կեանքն ալ սկսաւ մարել: Հողին վրայ դրի գայն, հողեւարք վիճակի մէջ, և ես ալ քովիկը ծոնք իջայ:

Աչքերը կը փողփողէին և վրաս էին յառած. պայծառամտութիւնը երեւան կուգար դեռ հոն, ատեն ատեն, և կը հառաչէր.

— Ամուսինս, սիրական ամուսինս:

Յետոյ, սարսուռ մը պատեց դայն ամբողջովին, դիմագիծերը անձկութիւնով համակուեցան, և մեռաւ:

Դուռսիս վիրակապերը քաշեցի բրցուցի և ինքզինքս կորսնցուցի: Ալ անկէ ետքը չեմ գիտեր թէ ի՞նչ անցաւ: Բայց կարծես երազի մէջ, զգայութիւնը ունեցայ, մարդերու որոնք չուրջս առին և դէնքերս վերուցին վրայէս: Յետոյ, ճիշտ քովս, հողը փորեցին ու փոս մը բացին...

Ամիս մը վերջը միայն ինքզինքիս եկայ Դալիֆօրնիաի մէջ, Մօզինսքի անուն ազգաբաղականի մը տունին մէջ: Ապաքինելուս պէս նորէն դէպ ի արեւելք մեկնեցայ: Խոտը աճած, բազմացած էր նորէն այրած տեղին վրայ և Լիլիէնի դերեզմանը գտնել անգամ անկարելի եղաւ ինձ: Այսօր իսկ չեմ գիտեր թէ ո՛ւր կը հանգչին իր պաշտեցեալ աճիւնները: Ի՞նչ ըրած էի ես քեզի, Տէր իմ Աստուած, որ այդպէս երես դարձուցիր ինէ ա

նապատին մէջ: Բնաւ հասկնալիք չունիմ այդ բանը: Եթէ թոյլատրուած ըլլար ինձ, գոնէ ժամ մը լալ, երիտասարդութիւնս ծածկող գերեզմանին վրայ, կեանքը աւելի դիւրատար պիտի ըլլար ինձ համար:

Ամէն տարի, նեւատա կ'երթամ և ամէն տարի, պարապ տեղը կը փնտռեմ: Այդ մահագոյժ օրերէն ի վեր շատ տարիներ անցան: Ծերացած շրթունքս շատ անգամներ մըմընջեցին:

— Թող քու կամքդ օրհնեալ ըլլայ:

Բայց երբեք չի մոռցայ Լիլիէնը և առանց անոր, կեանքը դժնդակ եղաւ ինձի համար:

Անգլթօրէն չարչարուած մարդ մը, կրնայ ապրիլ միւս մարդերուն մէջ, և նոյն իսկ երբեմն խնդալ անոնց հետ. բայց իր ծերուկ ու մենաւոր սիրտը կը սիրէ ու կուլայ, կը հեծեծէ ու կը միշտ:

Տարիքս առած եմ ալ, ասկէ ետքը այլ ևս շատ սպասելիք չունիմ ուրիշ ճամբորդութիւն մը, Յաւիտենականութեան ճամբորդութիւնը ընելու համար: Աստուծոյ մէկ բան մը միայն կը խնդրեմ. նորէն գտնալ Լիլիէնը երկնային վերնագաւառներուն մէջ և ա'լ յաւիտեան անբաժան ապրիլ անոր հետ:

Վ Ե Ր Ջ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

Յովսէփ Իզմիրեանց Գրական Յանձնաժողով

Յովսէփ Իզմիրեանց Գրական Յանձնաժողովը, առաջիկայ 1905 տարւոյ մրցանակին համար որոշեց 1901 ապրիլ 28ի հրահանգին եւ յօդուածոյն համեմատ՝ ներկայանալի երկասիրութեանց նիւթին որոշումն ինքն ընել, յուսալով այսու աւելի արդիւնաւոր ոճոյ մը նախափորձն ըրած լինել: Որոշուած նիւթն է «Արդի Հայերէնի բառարանին համար նախադատարարական նիւթերու հաւաքածոյ կազմել, իւրաքանչիւր բառի հանդէպ բառարանական սովորութեան տեղեկութիւններով և մանաւանդ ծագման և կիրառութեան մասին բացատրութիւններով»: Յանձնաժողովը

նկատի առնելով նիւթին ընդարձակութիւնը, որոշեց ևս զայն երեքի բաժնել, և իւրաքանչիւր մասին համար մրցանակի բաժին մը յատկացնել: Երեք բաժիններն են.

Ա. Նոր շինուած կամ ճշգրտած և նոր առում ստացած և հին Հայերէնէ նորագիւտ բառեր և ոճեր:

Բ. Արեւմտեան դաւառաբարբառներու բառեր և ոճեր:

Գ. Արեւելեան դաւառաբարբառներու բառեր և ոճեր:

Վեներաբիկ Ս. Առնոն Բառարանին վերջին տպագրութիւնը իբր հիմ ընդունուած է: Այս խատուութիւնները նոր և ձեռագիր պիտի ըլլան և յստակ գրուած: Արդէն տպագրեալ աշխատութիւններ նոյնութեամբ չեն կրնար առաջարկուիլ, բայց եթէ նոր յաւելուածներով ճոխացած ըլլան: Քերականական տեղեկութիւններ և բացատրութիւններ իբր գնահատելի առաւելութիւններ պիտի նկատուին:

Աշխատութիւնները պէտք է յղուին առ Ամեն. Ս. Պատրիարք Հայրն ի Կ. Պոլիս, մինչև 1905 տարւոյ փետրուարի վերջը:

Եթէ երեք ըստ նախնի սովորութեան անջատ նիւթի վրայ երկասիրութիւններ յղուած գտնուին, անոնք ըստ պատշաճին և արժանաւորութեան կամ բացառիկ մրցման մը նիւթ պիտի կազմեն և կամ յաջորդ մըրցանակի պիտի պահուին: Այս տեսակ երկերը եթէ տպագիր են՝ երեքական օրինակ, իսկ եթէ ձեռագիր են՝ մէկ օրինակ պիտի յղուին, բայց յստակ գրուած:

Յանձնաժողովոյն յղուած բոլոր աշխատութիւններ, մրցանակ ընդունին կամ ոչ, ետ չեն դարձուիր:

(Կնիք Ազգ. Պատրիարքարանի)

Տ. Ներսէս Վարդ. Դանիէլեան (Ստական Վարդապետ) հրատարակած է իր ժողովրդական քարոզներուն հաւաքածոն, Կեանքը առանց հաւաստի վերնագրով, որմէ 500 օրինակ նուիրած է Սոյ Մայրավանքի դպրոցին: Այս կրօնային գրական հատորը կը գտնուի Պոլսոյ բոլոր հայ գրաւթաններուն քով: — Գին 6 դր:

Արսոմասք Կ. Ս. Իիթիէճեան

Տպագրութիւն ԱՐԵՒԵԼԻՔ Օրագրի

Յ ՈՒՇԱՏԵՏՐ

Յ. ՄԱՏԹԵՈՍԵԱՆ

1904 ՏԱՐԻՈՅ ՀԱՄԱՐ

(AGENDA INTERNATIONAL)

Թուրքիեն, Հայերեն, Ֆրանսերեն եւ Յունարեն լեզուներով
Յառաջիկայ 1904 տարւոյ համար նախորդ տարիներէն աւելի ճոխ եւ աւելի
խնամով պատրաստուած եւ արդէն հրատարակուած է

Պարզ լաթակազմ 3 դր. } 25 օրինակէն աւելի գնող-
Ընթիւ լաթակազմ 5 » } ներուն գոհացուցիչ գեղջ.
ՈՍԿԵԶՕՄ ՓԱՌԱԿԱԶՄ 8 » }

Կը գտնուի Պոլսոյ եւ գաւառաց բոլոր գրավաճառներու եւ քրդա-
վաճառներու ֆով : Հրատարակիչն է

Յ. ՄԱՏԹԵՈՍԵԱՆ, ՊԱՅՊԼ ՀԱՌԻԶ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

ԿԱՐԱՊԵՏ. Է. ԻԻԹԻԻԺԵԱՆԻ Թարգ-
մանած գիրքերէն հետեւեալները կը գտնուին Պաղտատեան գրատունը եւ մայրա-
քաղաքիս միւս հայ գրավաճառներուն քով :

	հասոր	դր
Կարմիր մարդոց երդումը	2	10
Ընտանեզուրկ	2	12
Փարիզի ամուսնութիւնները	1	5
Թափառական Հրեայ	4	50
Արուարձանին տղան	3	15
Հանրակառքին ոճիրը	1	5
Սկզբունք Բաղ. Տոնեսութեան	1	4
Ընտանեկան գաղտնիքներ	3	15

ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆ Թ. ԳԱՐԱԳԱՇԵԱՆ
Հեռագր. Հասցէ՝ ԳԱՐԱԳԱՇԵԱՆ -- ԿԻՐԱՍՈՆ
Գնում եւ վաճառում, ներածում եւ ար-
տածում ի հայրէ :
Բացարձակ պայման՝ ԿԱԼԵՍԻԿ :

Յանձնառողիչքը պիտի գնահատէ յաճա-
խորդը : Կրկնապատիկ կը տուտէ մ' եւ է
վնաս, որ արդիւնք ըլլայ գործակալութեան
անհոգութեանը : Հրապարակի մասին պահան-
ջուած ծանօթութիւնք փութով կը ղրկուին,
եթէ 1 շաբաթ փութով ներփակուի : Յայտա-
գիրը կը ղրկուի պահանջողներուն : Դիմողը
երբեք չի վնասուիր. ընդհանրապէս :

ՊԱԼԵՆՑ ԳՐԱՏՈՒՆ

Թ. 20. Զաքմաքերար, Կ. Պոլիս

Ամենանոյս մթերք դպրոցական, գրական,
գիտական եւ այլ գրեանց

ՊԱԼԵՆՑ ԳՐԱՏՈՒՆԸ ներկայ դպրոցական
ընթանի առթիւ պատիւ ունի յայտարարել իր
բազմաթիւ յաճախորդաց թէ ունի հարկ եղած
անհրաժեշտ գիրքութիւններ՝ գրեական ամէն
յաճախարարութիւն գոհացուցիչ պայմաննե-
րով կատարելու, ըստ որում իբր գրավա-
ճառական մեծ հաստատութիւն մը արտադ-
րած է վերջին տասը տարիներու մէջ դըպ-
րոցական նորանոր դասագրքերու շարք մը
եւ այսպէս հիմնական բարեփոխումներ ներ-
մուծած է մեր կրթական հին մեթոտներուն
մէջ :

Ջերմապէս կը հրաւիրուին Պոլսոյ եւ գա-
ւառաց կրթական վարիչ մարմինները՝ փու-
թով յանձնարարել իրենց դասագրքերն, ի
նկատ առնելով գրատաճն ընծայած առաւե-
րութիւններն եւ ամէն բացառիկ պայմաններն :



ՌՕՍԻԱ - ROSSIA

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ



ՀՐԴԵՆ, ԿԵԱՆՔ, ՓՈԽԱԳՐՈՒԹԻՒՆՔ, ԱՐԿԱԾՔ

1881 մարտ 20ի կայս. Ուքազով արտոնուած

Կեդրոնատեղին Բեդերսպուրկ, իրեն յատուկ շէնքը:

Ընկերութիւնը խիստ նպաստաւոր պայմաններով ապահովագրութիւններ կ'ընդունի ԿԵԱՆՔԻ վրայ, եւ ՀՐԴԵՆԻ, ՓՈԽԱԳՐՈՒԹԵԱՆ ՎՏԱՆԳՆԵՐՈՒ, ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԱՐԿԱԾ-ՆԵՐՈՒ ԴԵՄ, ցկեանս ապահովագրութիւն ՇՈԳԵԿԱՌՔՈՎ ԵՒ ՇՈԳԵՆԱՌՈՎ ՈՒՂԵՒՈ-ՐՈՒԹԵԱՆ ԱՐԿԱԾՆԵՐՈՒՆ ԴԵՄ, ինչպէս նաեւ ՀԱՅԵԼԻՆԵՐՈՒ ԵՒ ԱՊԱԿԻՆԵՐՈՒ ԿԵ-ՐՈՆԵԼՈՆ ԴԷՄ:

Ընկերութեան դրամագումար, ամբողջապէս վճարուած 10,666,667 Ֆրանք
Երաշխաւորութեան գումար աւելի քան 137,300,000 »

Ընկերութեան ապահովագրողներուն վճարուած դրամա-
գումար եւ վնասուց հատուցում 282,000,000 »

1902 տարւոյ մէջ գանձուած ապահովագին եւ տուրս 54,000,000 »

Ամէն տեսակ տեղեկութեանց համար դիմել Կ. Պոլսոյ մասնաճիւղին, Աղարեան խան, Վոյվոտա, Ղալաթիա, — եւ Ղալաթիոյ Գործակալութեան, Էսկի Կէօրիւք խան, Բարափին վրայ:

ՄՐՄԱՔԷՇԻ ԶՈՒՐ

(ՊԷՅՔՕԶ)

Ա.ԽՈՐԺԱՀԱՄ, ԹԵԹԵՒ ՈՒ ՕԳՏԱԿԱՐ

Սոյն հանրածանօթ աղբիւրին ջուրը, ախորժաւամ եւ վճիտ, յաճնարարուած է մայրաքաղաքին ականաւոր բժիշկներուն կողմէ, որոնք անձամբ փորձած են անոր յատկութիւնները: Մասնաւորապէս, քիմիագէտ Պ. Բիէռ Արէոի տարրալուծած է զայն եւ Թաշտէլի ու Գանդաքավաքի ջուրերէն գերադասեցապէս լաւագոյն դասած է, ստուգելով որ անոր ջրաշափական աստիճանը 1⁰ է եւ բնաւ ստամոքսի ծանրութիւն չիտար:

Տեղական հիւանդանոցներէն շատեր, իրենց բժշկապետներուն յաճնարարութեամբ, այս ջուրը կը գործածեն, որ ուղղակի աղբիւրէն կը բերուի ամենայն խնամքով եւ մաքրութեամբ, չիյեր ու տակառները հոն լեցնելով ու զմռսուելով:

ՄՐՄԱՔԷՇ ԶՈՒՐԻՆ գերընտիր ու անմրցելի ըլլալը հաստատած են նաեւ, քիմիագէտ Տօքթ. Մաննիէզատ, հետեւեալ բժիշկները.

Տօքթ. Տօքթա փաշա (ընդհ. քննիչ առողջապահական վարչութեան) Կապուլի, Զէրրի. Սթէքուլի. Ավիլիանօ, Մալլի, Միրապէլ, Բանայօթ պէյ, Պալիաիս, Բարաքօվսքի, Բիլէմօվ, Մօրթման, Տէլլասուտա Յայիգ փաշա եւ Սիմօնօֆ:

Վաճառման կեդրոնատեղիներն են՝ ԲԵՐԱ, Մեծ-Փողօց, Հալէպ խան, Թ. 7, — ՊՈԼԻՍ, Սիրքէճի, Պապը-Ալիի մեծ պողոտային վրայ, Թ. 34 մթերանոցը, ինչպէս նաեւ Շուկային Նուրի Օսմանիյէի դրան կից Թ. 21 խանութը:

Սոյն մթերանոցներուն մէջ կը վաճառուի նաեւ, ՄՐՄԱՔԷՇ ջուրէն զառ, Բարաքօվաքի ջուր: Գիները շատ ատան են՝ ժողովրդեան դիւրամատչելի ըլլալու համար:

Փորձի համար շիշ մը գնեցէք ՄՐՄԱՔԷՇԻ ջուրէն, եւ այնքան համով ու թեթեւ պիտի գտնէք, որ վստահաբար պիտի գործածէք զայն այսուհետեւ:

Սոյն հանրածանոթ չաքարավաճառը՝ Բերայի շիտակ ճամբան, թիւ 54, իր խանութը ընդարձակած ու ճոխացուցած է, թէ՛ իբրեւ բաթիսըռի եւ թէ՛ իբրեւ չաքարավաճառ, աւելի գոհ ձգելու համար իր բաղմաթիւ յաճախորդները։ Ամրան եղանակին մէջ, համեղ պաղպաղակներու պէսպիսութիւն մը կայ ցորեկ եւ գիշեր։

ՀԱՅԻ ՍԱՐԻՄ Օսմ. չաքարագործը՝ ճոխ միջերջ մը ունի հարսանեկան չաքարեղէններու, ընտիր տեսակէ, ու մասնաւորապէս յանձն կ'առնէ հարսանեկան հանդէսներու առաջին ո՛չ միայն անոնց հայթայթումը՝ այլ նաեւ մատուցումը եւ սպասարկութիւնը տուներու մէջ։

Միակ մասնաճիւղ, Ղալաթիա. Թօփճըլար Ճատտէսի, Թ. 101:

22—30



Անկարելի է որ ընտանիք մը առանց կարի մեքենայի մնայ, բայց էական կէտն է լաւ մեքենայ մը ստանալ, որովհետեւ լաւ մեքենայ մը անթիւ եւ անհամար ծառայութիւններ կը մատուցանէ, մինչդեռ գէշ տեսակէ մեքենայ մը անվերջ դժգոհութեանց եւ տաղտուկի աղբիւր մըն է։

Բոլոր աշխարհ գիտէ թէ՛

ՍԻՆԿԷՐ

ՀԱՅՅԱՅԹԻԶ ԿԱՅՍ. ՊԱՐԱՏԱՐ

The Singer Manufacturing Cie.

Ձեռքի, ոտքի ու ոտքի եւ ձեռքի միանգամայն մեքենաներ կը գտնուին։

մեքենան լաւագոյնն է. սոյն մեքենան ամենէն աւելի կատարելագործուածը, հաստատունը եւ գիւրագործածելին ըլլալուն՝ բովանդակ աշխարհի մէջ ամէն ոք Սինկէրի մեքենաները կը գտնէ։

Սինկէրի մեքենաները կը ծախուին միմիայն Սինկէր Ընկերութեան վաճառատանց մէջ։

- | | | |
|---------|---|--|
| ԲԵՐԱ. | } | 1. Մեծ փողոց, Պօն Մառչէի դէմ, Թ. 343 եւ 343 կրկին |
| | | 2. Մեծ փողոց, Կալաթա Սէրայի Լիսէին դէմ. |
| ԿԱԼԱԹԱ. | } | 1. Սինկէր խան, Թիւնէլին ետեւը. |
| | | 2. Գարաքէօյ, Թրամվէյին կայարանին դէմ. |
| ՊՈԼԻՍ | } | 1. Սուլթան Համամ, Թ. |
| | | 2. Սուլթան Պէյազիտ, Թրամվէյի կայարանին դէմ, Թ. 13. |
| ՍԵԻՏԱՐ | | Չարչը Պօյու, Թ. 120. |

Դասերը եւ նորոգութիւնք ձեռք.

Կասաբեալ երախաւորութիւն։

Մասնաճիւղեր գաւառաց բոլոր քաղաքներուն մէջ։

Սինկէրի Ընկերութեան կեդր. վարչատեղին կը գտնուի Բերա, Մեծ փողոց, Թ. 343 եւ 343 կրկին, Սարգիս Պէյ Տիւղօղլուի տունը։

ՇԱՔԱՐԱՎԱՅՈՐԾ
ՍԻՆԿԷՐ

ՖԵՆԻՔՍ ՕԹՐԻՇԻԷՆ

ԿԱՅՍ. ԹԱԴ. ԱՌԱՆՁՆԱՇՆՈՐՀԵԱԼ ԱՊԱՀՈՎԱԳՐ. ԸՆԿ.

Հրդեհի եւ կեանքի (Ի ՎԻԵՆՆԱ)

ՊԱՏՈՒՍԿԱԼ ՆԱԽԱԳԱՀ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

Ն. Ա. Բ. ԴՈՒՔՍ ԼՈՒՐԻՏԵ ՊԱՎԻԷՆ

ԼԱ ԷՍԹՐԵՅԵԱ

Ապահովագր. ԸՆԿ. Ընդդեմ հրդեհի (Ի ԲԱՐՔԱՅԷՆ)

ԱԼԼԵԱՆՑԱ

Տոլային ապահովագր. ԸՆԿ. (Ի ՃԵՆՈՎԱ)

Սոյն ընկերութեանց Դրամատունն է ի Կ. Պոլիս, Բոքսի Լիօնէ

Ընդհ. եւ լիազօր ներկայացուցիչ թուրքիոյ

Գ. ՅԵՐՄԱՏԵԱՆ

Դրասենեակ, Պոլիս, Հանօբուլօ խան, Թ. 52-53-54-55-56

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ

Գ. ԳԱՐՐԻԷԼԵԱՆ

ԲԵՐԱ ՄԵԾ ՓՈՂՈՅ ԹԻՒ 200

Կարձա-Սէրայի Լիսէին Դ.Մ.

ԳԵ. ՆԵ. ՇԲ. օրերը առաւօտեան կանու-

լսեն մինչեւ իրիկուան ժ. 11¹/₂

ԲԵ. ԳԵ. ՈՐ. օրերը 6եմ մինչեւ 11¹/₂

Երակի օրերը ժամադրութեամբ

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ԿԵԴՐ. ԳՐԱՏԱՆ

Ձախմահերու քիւ 64

ԸՆԹԱՅԻ ԸՆԹԵՐՑԻ.— ԴՊՐՈՑԻԳԻՐԲԸ, Հրատարակուեցաւ Տարր. Ընթ. Բ. տարին, ճօխ պատկերներով ու բաղմաղան նիւթերով հեղ. Զ. էֆ. Թրոսեանի. գին 4 դահ.։ Դպրոցի պատ. Տնօրէնք օրինակ 1-ը ձրի 4Ը ստանան, 50 փարայ բօսթի ծախք ղրկելով։ Ուղղակի Գրատան դիմողներուն կարելու գեղչ մը տուի։

Վ. Յ. Յակոբեան Անգղ-Հայ Բառգիրքը որ սպառելու վրայ է, միմիայն յիշեալ գրասունքը կը գտնուի. ուր դիմելու են պէտք ունեցողները։ գին 80 դրչ։

Ամեն վնարում կանխիկ է։

8-10

Գ. Յ. ՅԵՐՄԱՏԵԱՆ

ՅԱՆՁՆԱԿԱՏԱՐ

ՍԱՄՍՈՐ

Կը ստանձնէ վաճառականական պիտոյից, սպազրական գործերու պատրաստութեան հոգը.

ԳԻՆ ԴԻՐԱՄԱՏՉԵԼԻ

Մախուր եւ արագ գործօնեութիւն.

Արժէք կանխիկ. 50% զեղչ.

Մանօթ վաճառականաց, ապառիկ.

Առաջին փորձը կը վստահեցնէ ձեզ ամէն մասամբ։

Մանրամասնութեանց համար դիմել

Կ. Յ. ՏԵՐԻՄԵՆՃԵԱՆ

ՍԱՄՍՈՐ

Յ. ՄԱՏԹԷՈՍԵԱՆ Տպարանին ու կազմատան համար պէտք կայ քանի մը գործաւոր տղոց։

Նոյնպէս համանուն թղթավաճառանոցին ու գրասենեակին համար պէտք կայ մէկ-երկու երիտասարդի, բաւականաչափ ունեւոր ունեցող, առուտուրի գործերու եւ գրադրութեան յարմար։

ԴԻՄԵԼ՝ Յ. Մատթէոսեան թղթավաճառատունը, Կ. Պոլիս, Ֆինճանճըլար Եօդու։